



Արա ՄԱՐԵԱՅԱՅԱ

ՄԴՐԵՑԱՆԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ.

**«ՎԻՐՏՈՒԱԼ» ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

9(Կ. 924)  
Վ-38  
հ2

Հայաստանի Հանրապետության  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ բյուջե



ՆՈՐԱՎԱՆԵ

ՀԵՇՈՅ  
ԴԱՏԱՐԱ  
ՑՈՒՅՈ

Արա Մարգանյան

ԱՐՐԵՋԱՆԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ.  
«ԿԻՐՏՈՒՄ» ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԲ 16



Երևան  
2012

Հ-31-252-000-ԵՐԵՎԱՆ



**Գիտական խմբագիր՝  
Գաղիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**Մարգանյան Արա**

**Մ 387**

Աղբեջանական Հանրապետություն. «Վիրտուալ»  
ժողովրդագրության առանձնահատկությունները – Եր.:  
«Նորավանք» ԳԿՀ, 2012. – 96 էջ:

Գրում դիտարկվում են Աղբեջանական Հանրապետության (ԱՀ) ժողովրդագրությանը վերաբերող պաշտոնական վիճակագրական տվյալները: Իրականացվում է այդ տվյալների համեմատական վերլուծություն՝ մի շարք միջազգային և այլ հեղինակավոր աղյուսների տվյալների հետ համադրումով: Ցույց է տրվում, որ ԱՀ պաշտոնական աղյուսները հետևողականորեն խեղաթյուրում են միջրացիոն հոսքերի պատկերը, մահացությունների և ծննդյան վիճակագրությունը արհեստականորեն ավելացնելով ԱՀ բնակչության պաշտոնական թվաքանակը 2.0-2.2 մլն մարդով: Ակսած 1996-97թթ. պաշտոնական Բարուն խեղաթյուրում է բնակչության աճի տարեկան տեմպի և բնակչության սեռական կազմի մասին տվյալները: Հավատարիմ մեալով տասնամյակներ տևող «ավանդույթներին» պաշտոնական Բարուն շարունակում է հետևողականորեն կեղծել երկրի բնակչության ազգային կազմի մասին տվյալները: Ցույց է տրվում, որ պաշտոնական Բարվի կողմից աղավաղված վիճակագրությունը յուրօրինակ կերպով վավերացվում և տարածվում է միջազգային մի շարք կազմակերպությունների կողմից:

ՀՏ 314  
ԳՄ 60.7

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Նախաբան.....	6
<b>Գլուխ 1.</b>	
Աղբեջանական Հանրապետության բնակչությունը.....	10
<b>Գլուխ 2.</b>	
Միզրացիան Աղբեջանական Հանրապետությունում.....	32
<b>Գլուխ 3.</b>	
Աղբեջանական Հանրապետության բնակչության աճի տեմպը.....	48
<b>Գլուխ 4.</b>	
Աղբեջանական Հանրապետության բնակչության կազմն ըստ սեռի.....	59
<b>Գլուխ 5.</b>	
Աղբեջանական Հանրապետության բնակչության ազգային կազմը.....	67
<b>Եզրակացություններ.....</b>	
Աղբյուրներ և գրականություն.....	84
<b>Հավելված 1.</b>	
Միզրանտներ և դրամային փոխանցումներ.....	88
<b>Հավելված 2.</b>	
Աղբեջանական Հանրապետության բնակչության կազմը (մին մարդ)՝ ըստ սեռի: Պաշտոնական տվյալներ.....	94

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՎՊԿ	Աղրթօնական Հանրապետության վիճակագրական պետական կոմիտե
ԱՀ	Աղրթօնական Հանրապետություն
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ (IMF)
ԱՄՆ ԾԲ	ԱՄՆ Մարդահամարների բյուրո (US CB)
ԱՄՆ ԿՀԿ	ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչություն (US CIA)
ԱՉԳ	Ազերի-Չիրագ-Գյունեղլի նավթադաշտ (ACG)
ԱՊՀ	Անկախ Պետությունների Համագործակցություն (CHF)
ԲԹՁ	Բաքու-Մբիլիսի-Զեյխան նավթամուղ (BTC)
ՀԲ	Համաշխարհային բանկ (WB)
ՀԲ ԶՀՀ	ՀԲ Զարգացման հեռանկարների հանձնախումբ (WB DPG)
ՀՆԱ	Համախառն ներքին արտադրանք (GDP)
ՄԱԿ	Միավորված Ազգերի Կազմակերպություն (UN)
ՄԱԿ ԺԴ	ՄԱԿ ժողովրդագրական դեպարտամենտ (UN PD)
ՄԱԿ ԺՏ	ՄԱԿ ժողովրդագրական ամենամյա տեղեկատու (UN DVB)
ՄԱԿ ՏՍՀԴ	ՄԱԿ Տնտեսական և սոցիալական հարցերի դեպարտամենտ (UN DESA)
ՎՀ	Վրաստանի Հանրապետություն

## ՈՉՄՄՈՒՄՐԱՆ

Ապահովագումը հաջողացնելու հայտադրությունը մունքում	ՀԱՅԱՍՏԱՆԻ
Ապահովագումը հայտադրությունը	ՀԱՅ
(ԲՄ) հայտանելու մեջ օրբաժնի դրուելը	ՀԱՅ
(ԲԸ ԲՄ) որում / համապատասխարությունը	ԱՅ-ՀԱՅ
<b>ՆԱԽԱԲԱՆ</b> (ԱՅ Ապահովագումը հայտադրությունը / ՀԱՅ)	ՀԱՅ ՀԱՅ
(ՀՀՀ) ուղարկուած դիմումը Բարեհանձնություն	ՀԱՅ

Հայրենական հրատարակություններում և մամուլում առկա են Աղրբեջանին նվիրված քազմաթիվ ուսումնասիրություններ և հոդվածներ<sup>1</sup>: Դրանք, սակայն, հիմնականում ուղղված են Աղրբեջանի արտաքին քաղաքականության քննմանը, դիտարկում են այս երկիրն Արցախի հետ հակամարտության տեսակետից, վերլուծում Աղրբեջանի Հանրապետության (ԱՀ) հակահայկական քարոզամերենան և/կամ դիտարկում այս երկիրն առավելապես տարածաշրջանային ու գլոբալ աշխարհադարարական գործընթացների ենթատերսում: Որոշ դեպքերում դրանցում քննվում են Աղրբեջանի գուտ ռազմական ներուժի որոշ ասպեկտներ: Եվ զարմանալիորեն սակավաթիվ են

<sup>1</sup> Միայն «Նորավանք» ԳԿՀ կայքում ([www.noravank.am](http://www.noravank.am)), սկսած 2005 թվականից, կարելի է գտնել Աղրբեջանին նվիրված շուրջ 500 նյութ:

Աղրբեջանի ընդհանուր սոցիալ-տնտեսական համակարգին նվիրված ամբողջական աշխատությունները: Այս առումով տեղեկատուի և փաստագրական աղբյուրի առավելությունները համատեղող վերլուծական ուսումնասիրություն հայրենական վերլուծաբանական հրապարակումներում, թերևս, բացակայում է: Մինչդեռ, Աղրբեջանի հնարավորությունների և զարգացման հեռանկարների իրական ըմբռնման համար նման աշխատությունների առկայությունն ուղղակի անհրաժեշտություն է:

Սույն հրապարակում ուղղված է այս բացը գոնե մասնակիորեն լրացնելուն: Ստորև դիտարկվում են Աղրբեջանի բնակչության թվի և այլ ժողովրդագրական ցուցանիշների պաշտոնական Բարքի վիճակագրական տվյալները: Բանն այն է, որ «որքա՞ն է Աղրբեջանի բնակչությունը» պարզ հարցը չունի նույնքան պարզ պատասխան: Ավելին, այս հարցն ընկած է ԱՀ իշխանության կողմից վարվող տեղեկատվական պատերազմի հիմքում: Ուստի, այն խճողված է բազմաթիվ խեղաքյուրումներով և մեքենայություններով: Մինչդեռ բնակչության ժողովրդագրական տվյալները երկրի սոցիալ-տնտեսական համակարգի հենքն են: Եվ այստեղ իրական վիճակը հասկանալն առավել քան անհրաժեշտություն է:

Սույն աշխատության դիտարկումների հիմքում ընկած են ԱՀ Վիճակագրական պետական կոմիտեի (ԱՎՊԿ) պաշտոնական տվյալները, որոնք համեմատվում են մի շարք հեղինակավոր կառույցների ԱՀ ժողովրդագրությանը վերաբերող տվյալների

հետ: Այսպիսի մոտեցումը պարզապես անհրաժեշտություն է, քանի որ Աղբբեջանի ժողովրդագրական վիճակագրական տվյալները հետևողականորեն և տևական ժամանակ խեղաթյուրվում են պաշտոնական Բարձի կողմից, իսկ միջազգային մի շարք կառույցների տվյալներն իրարամերժ են և հակասական:

Իրականացված համեմատական վերլուծության արդյունքում ցոյց է տրվում, որ ԱՀ պաշտոնական աղբյուրները հետևողականորեն խեղաթյուրում են միզգրացիոն հոսքերի պատկերը, մահացությունների և ծննդյան վիճակագրությունը՝ արհեստականորեն ավելացնելով Աղբբեջանի բնակչության պաշտոնական թվաքանակը 2.0-2.2 մլն մարդով: Սկսած 1996-97թք.<sup>1</sup> պաշտոնական Բարուն խեղաթյուրում է բնակչության աճի տարեկան տեմպի և բնակչության սեռական կազմի մասին տվյալները: Հավատարիմ մնալով տասնամյակներ տևող «ավանդույթներին»՝ պաշտոնական Բարուն շարունակում է հետևողականորեն աղավաղել երկրի բնակչության ազգային կազմի մասին տվյալները: Հատկանշական է, որ պաշտոնական Բարձի կողմից աղավաղական ժողովրդագրական վիճակագրությունը յուրօրինակ կերպով վավերացվում և տարածվում է միջազգային մի շարք կազմակերպությունների կողմից:

Գրքում ներկայացվող բոլոր ցուցանիշների համար նշվում են աղբյուրները: Եթե դրանք չեն նշվում, նշանակում է՝ օգտագործված է նախորդ աղբյուրը կամ բերվում են սեփական հաշվարկներ և գնահատումներ: Բոլոր այլ դեպքերը հատուկ նշվում են:

Համացանցի կայքէջերից տվյալների ներբեռնումն իրականացվել է 2011-ի սեպտեմբերին և թարմացվել 2012թ. հունվարի դրությամբ: Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկը բերվում է վերջում: Մեջբերված օտարալեզու աղբյուրների թարգմանությունները հեղինակինն են: ԱՎՊԿ պաշտոնական կայքի<sup>1</sup> և այլ կեկտրոնային աղբյուրներից բոլոր ներբեռնումներն իրականացվել են 2011թ. սեպտեմբերի վերջին և ճշգրտվել 2011թ. դեկտեմբերին: Այլ դեպքերը նշվում են հատուկ:



<sup>1</sup> [http://www.azstat.org/statinfo/demoqgraphic/en/AP\\_1.shtml](http://www.azstat.org/statinfo/demoqgraphic/en/AP_1.shtml)

## Գլուխ 1.

## ԱՐԲԵՏԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն ԱՎՊԿ պաշտոնական տվյալների, 2011թ. սկզբին Աղրբեջանի բնակչությունը կազմել է 9.11 մլն մարդ: Նույն գևահատականը կրկնում է նաև ԱՊՀ երկրների Միջպետական վիճակագրական կոմիտեն<sup>1</sup>: Աղյուսակ 1-ում բերվում են բնակչության թվի մասին ընդհանուր տվյալները, որոնք վերցված են ԱՎՊԿ պաշտոնական կայքից 2011թ. սեպտեմբերի վերջի դրությամբ: Համաձայն աղբյուրի, դրանք հաշվի են առնում 2009թ. ապրիլին Աղրբեջանում անցկացված մարդահամարի տվյալները:

<sup>1</sup> Межгосударственный статистический комитет СНГ. <http://www.cisstat.com/>

Տարիներ	Բնակչությունը	Բնակչության աճ	Ծնունդ	Մահ
	հազ. մարդ	%	1000 մարդու հաշվով	
2000	8032.8	1.00%	8.8	14.7
2001	8114.3	1.01%	8.1	13.7
2002	8191.4	0.95%	8.0	13.7
2003	8269.2	0.95%	7.9	13.9
2004	8349.1	0.97%	9.9	15.9
2005	8447.4	1.18%	10.7	16.9
2006	8553.1	1.25%	11.3	17.5
2007	8666.1	1.32%	11.5	17.7
2008	8779.9	1.31%	11.4	17.4
2009	8922.4	1.62%	11.3	17.2
2010	8997.6	0.84%	12.5	18.5
2011	9111.1	1.26%		

Ինչպես տեսնում ենք աղյուսակից, ըստ պաշտոնական բարվի, ԱՀ բնակչությունը 2011թ. կազմել է 9.1 մլն մարդ, իսկ բնակչության տարեկան աճն անցած 11 տարիների ընթացքում չի իջել 0.95% ցուցանիշից, բացառությամբ 2010թ., երբ այն կազմել էր 0.84% (այս բացառությանը կանդրադառնակը ստորև):

Պաշտոնական այս տվյալները մի շաբթ հարցեր են առաջացնում: Նախ, անմիջապես ասենք, որ պաշտոնական Բարուն չի տարբերակում *de jure* և *de facto* բնակչությունը՝ այնպես, ինչպես դա ընդունված է գրեթե բոլոր երկրների և միջազգային կառույցների, այդ թվում՝ Հայաստանի վիճակագրական ծառայությունում: Բացի այդ, բերված պաշտոնական թվերն եապես տարբերվում են այլ աղյուրների տվյալներից:

Ընդհանրապես, Աղբեջանի բնակչության մասին հասանելի տվյալները չափազանց հակասական են: Նույնիսկ հեղինակավոր մի շարք կառույցների տվյալները զգալիորեն տարբերվում են և միմյանցից, և՝ պաշտոնական Բարվի տվյալներից: Ընդ որում, այս տարբերությունները միայն մասնակիորեն կարելի է բացատրել օգտագործված մեթոդաբանությունների առանձնահատկություններով: Ուստի, դիտարկումների օբյեկտիվության պահպանման տեսանկյունից ԱՎՊԿ տվյալներն անհրաժեշտ է համադրել այլ աղբյուրների տվյալների հետ, և դրա համար նպատակահարմար է օգտվել միայն այն կազմակերպությունների և կառույցների տվյալներից, որոնք տասնամյակներ շարունակ զբաղված են աշխարհի գրեթե բոլոր երկրների բնակչության թվի և ժողովրդագրական տվյալների կազմմամբ, մողելավորմամբ ու հրատարակմամբ:

Հիմնվելով ժողովրդագրական տվյալներ հրապարակող ավելի քան մեկ տասնյակ այս տիպի աղբյուրների բննության վրա՝ որպես առավել բնութագրական մենք առանձնացրել ենք ԱՄՆ Սարդահամարների բյուրոն (ԱՄՆ ՄԲ, *US Census Bureau, USCB*)<sup>1</sup>, ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչությունը (ԱՄՆ ԿՀՎ, *US CIA*)<sup>2</sup> իր «World FactBook» ամենամյա տեղեկատուներով [1], ՄԱԿ Տնտեսական և սոցիալական հարցերի դեպարտամենտը

Աղբեջանական ՀաՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
«Կիրովում» ժողովրդագրության առաջականությունը

(ՄԱԿ ՏՏԸՆԴ, *UN DESA*)<sup>3</sup>՝ իր ժողովրդագրական տվյալների գրադարանով և «Demographic Yearbook» (ՄԱԿ ԺՏ, *UN DVB*) ամենամյա տեղեկագրերով [2], ինչպես նաև Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ, *IMF*)՝ իր տվյալների էլեկտրոնային գրադարանով<sup>4</sup>: Սակավաթիվ այլ հեղինակավոր (Համաշխարհային բանկի «Զարգացման հեռանկարները» հանձնախումբ<sup>5</sup>, Միգրացիայի ուսումնասիրման միջազգային կազմակերպություն<sup>6</sup> և այլն) և բազմաթիվ ոչ այնքան հեղինակավոր աղբյուրները որպես հիմք օգտագործում են նշված 4 կազմակերպություններից որևէ մեկը կամ հենվում են ազգային պաշտոնական վիճակագրության վրա:

Այստեղ առանձնացնենք ԱՄՆ ԿՀՎ «World FactBook» տեղեկատուների դեպքը: Բանն այն է, որ ժողովրդագրական տվյալների իր գնահատականներում ԱՄՆ ԿՀՎ նշված տեղեկատուները որպես ելակետ հենվում են ԱՄՆ ՄԲ-ում կատարվող մողելավորումների արդյունքների վրա: Սակայն հետո այդ արդյունքները համադրվում են տարաբնույթ այլ աղբյուրներից ստացված տեղեկատվության, ինչպես նաև համեմատվում են սեփական հաշվարկների հետ: Արդյունքում՝

<sup>1</sup> [http://esa.un.org/unpd/wpp/unpp/panel\\_population.htm](http://esa.un.org/unpd/wpp/unpp/panel_population.htm)


<sup>2</sup> <http://www.imf.org/external/pubs/ft/weo/2011/02/weodata/index.aspx>. Այս աղբյուրը մենք ներառել ենք այն բանի համար, որ ԱՄՀ-ն Աղբեջանի սոցիալ-տնտեսական համակարգի կարևոր այլ ցուցանիշների և տեղեկատվության հիմնական աղբյուր է հանդիսանում:

<sup>3</sup> WB DPG, տե՛ս ստորև:

<sup>4</sup> IoM, տե՛ս ստորև:

ԱՄՆ ԿՀՎ տվյալներն ունեն առավել անկախ բնույթ և համեմատաբար ավելի մոտ են իրականությանը: Վերը նշված այլ աղբյուրներում նկատելի է մոդելավորումների ընթացքում կուտակվող խեղաթյուրումների ազդեցությունը: Դե, իսկ ԱՀ ազային վիճակագրական տվյալները միշտ են ենթակա են եղել տարատեսակ խեղաթյուրումների:

Ի մի բերելով անցած 11 տարիների համար վերը նշված 4 կազմակերպությունների տվյալներն Աղրբեջանի բնակչության թվի վերաբերյալ դրանք պատկերել ենք մեկ միացյալ գրաֆիկում (տե՛ս Նկար 1), որը բերում ենք նաև ԱՎՊԿ պաշտոնական տվյալներն Աղրբեջանի բնակչության թվաքանակի մասին: Ինչպես տեսնում ենք այս նկարից, բերված աղբյուրները հստակորեն բաժանվում են երկու խմբի: Առաջինը ԱԱՀ, ԱԱԿ ԺՏ, ԱՄՆ ՄԲ, ինչպես նաև պաշտոնական Բարքի տվյալներն են, որոնք թեև տարբերվում են միմյանցից, բայց այնուամենայնիվ բերում են մոտ զնահատականներ: Այստեղ տեսանելի է Աղրբեջանի բնակչության թվի մասին ԱՄՆ ՄԲ մոդելային արդյունքների զնահատականների շոշափելի գերազնահատումը: Այն առկա է նաև ԱԱՀ զնահատականներում, սակայն ԱԱՀ փորձագետները հակված են հետզհետեւ մոտեցնել իրենց արդյունքները պաշտոնական Բարքի զնահատականներին:



Առաջին խմբի այս աղբյուրներից անհրաժեշտ ենք համարում ավելի հանգամանալի անդրադառնալ Աղրբեջանի բնակչության մասին ՄԱԿ ԺՏ տեղեկատուներին [2], նախ այն բանի համար, որ դրանք առավել մոտ են ԱՎՊԿ պաշտոնական տվյալներին: Երկրորդ պատճառն այն է, որ հենց այս աղբյուրն է, որն առավել քան որևէ այլ աղբյուր օգտագործվում է Աղրբեջանի ժողովրդագրությանը նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններում, լայնորեն մեջբերվում է մամուլում, հատկապես աղրբեջանական մամուլում և զանգվածային այլ լրատվամիջոցներում: Եվ վերջին պատճառն այն է, որ ՄԱԿ ԺՏ աղբյուրը [2],

լինելով միջազգային հեղինակավոր կազմակերպության տեղեկագիր, Աղբեջանի ժողովրդագրական տվյալների մասով, այնուամենայնիվ, պարունակում է բազմաթիվ անհասկանալի և անհիմն գնահատականներ, որոնք խճողում են հարցը: Աղյուսակ 2-ում ամբողջացնում ենք 2011թ. դեկտեմբերի դրությամբ ՍԱԿ ԺՏ բոլոր տեղեկագրերի տվյալները (1992-2010թթ.), որոնք վերաբերում են Աղբեջանական Հանրապետության ժողովրդագրությանը:

Նշված տեղեկագրերում այս տվյալները բերվում են երեք խմբով: Առաջին խմբում նշվում են երկրի բնակչության թվաքանակի ՍԱԿ Ժողովրդագրության դեպարտամենտի (*UN Population Division*) փորձագետների գնահատականը և գնահատականի տիպը՝ «սեփական գնահատական», «նախնական գնահատական»: Տվյալների երկրորդ խմբում բերվում են այդ տարի իրականացված նախորդ որևէ տարվա համար երկրի բնակչության տարեմիջյան գնահատականը, գնահատականի տիպը (*DJ - de jure* բնակչությունը, *DF - de facto* բնակչությունը), դիտարկման ժամանակահատվածը և դիտարկված ժամանակահատվածում բնակչության տարեկան աճը: Վերջին՝ երրորդ խմբում բերվում է այդ տարի ՍԱԿ Ժողովրդագրության դեպարտամենտի փորձագետների օգտագործած բազային տարվա համար երկրի բնակչության ընդհանուր թվաքանակը, ինչպես նաև բնակչության սեռական կազմի մասին տվյալները: Ընդ որում, որպես կանոն,

բազային տարի է հանդիսանում նախկինում իրականացված մոտակա մարդահամարի տարին<sup>1</sup>:

Աղյուսակ 2-ից հետևում է, որ, օրինակ, համաձայն ՍԱԿ ԺՏ 1993թ. տեղեկագրի, Աղբեջանի բնակչության թվաքանակի ՍԱԿ Ժողովրդագրության դեպարտամենտի փորձագետների սեփական գնահատականը կազմել է 7.392 մլն մարդ 1993թ. համար, իրականացվել է տարեմիջյան գնահատական 1990թ. համար, և այդ տարի Աղբեջանի *de jure* բնակչությունը գնահատվել է 7.153 մլն մարդ, իսկ 1990-93թթ. ժամանակահատվածում բնակչության տարեկան աճը գնահատվել է 1.1%: Ընդ որում, 1993թ. տեղեկագրի այս արդյունքների համար բազային տարի է հանդիսացել 1989թ. (ԽՍՀՄ վերջին մարդահամարի անցկացման տարին), որի արդյունքներով Աղբեջանում այդ ժամանակ բնակչությունը կազմել էր 7.021 մլն մարդ, որից 3.424 մլն մարդ արական և 3.597 մլն մարդ իգական սեռի (տոկոսային համամասնությունը՝ 48.8% արական, 51.2% իգական):

<sup>1</sup> Բազային տարվա տվյալներն օգտագործվում են *UN PD* փորձագետների կողմից երկրի ժողովրդագրական դիմամիկայի մոդելավորումների և սեփական գնահատականների համար:

Աղյուսակ 2. Աղրբեջանական Հանրապետության բնակչությունը՝ ըստ ՍԱԿ ԺՏ  
*Demographic Yearbook տեղեկատունների*

Տարի	Տարեմիջան գիտատական			Բազային մարդահամար			
	ՄԱԿ	ՄԱԿ	ՄԱԿ	Տարի	Ամ-րողը	Ար.	Բ. Ք.
	մլն մարդ	Մակ.	մլն մարդ	մլն մարդ	մլն մարդ	մլն մարդ	մլն մարդ
1992	7.392	Սեփ.	1985	6.661	DJ		
1993	7.392	Սեփ.	1990	7.153	DJ	1990-93	1.10%
1994	7.472		1990	7.153	DJ	1990-94	1.10%
1995	7.499	Սեփ.	1990	7.153	DJ	1990-05	0.90%
1996	7.554	Նախ.	1990	7.153	DJ	1990-06	0.90%
1997	7.625	Նախ.	1990	7.153	DJ	1990-05	0.90%
1998	7.665	Նախ.	1993	7.399	DJ	1993-98	0.70%
1999	7.983	Նախ.	1995	7.685	DJ	1995-99	1.10%
2000	8.049	Նախ.	1995	7.685	DF	1995-00	0.90%
2001	8.111		1995	7.685	DF	1995-01	0.90%
2002	8.172		1995	7.685	DF	1995-02	0.90%
2003	8.234		2000	8.049	DF	2000-03	0.80%
2004	8.306		2000	8.049	DF	2000-04	0.80%
2005	8.392	Նախ.	2000	8.049	DF	2000-05	0.80%
2006	8.485	Նախ.	2000	8.049	DF	2000-06	0.90%
2007	8.581		2005	8.392	DF	2000-07	1.10%
2008	8.680		2005	8.392	DF	2005-08	1.10%
2009	2009թ. չի հրապարակվել, հաջորդ տարի տպագրվել է 2009-10թթ. միացյալ տեղեկատու						
2010	9.047		2005	8.5	DF	2005-10	1.20%
						2009	8.922

Աղբյուր՝ UN Demographic Yearbooks [2]

Առաջինը, ինչի վրա անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ՍԱԿ ԺՏ տվյալներում, այն է, որ 1990-95թթ. ժամանակահատվածի համար ՍԱԿ ԺՏ փորձագետների գնահատմամբ՝ Աղրբեջանի բնակչությունը հաստատունորեն աճել է, այն էլ՝ տարեկան մոտ 1.0% բավական զգալի տեմպով: Հիշեցնենք, որ դրանք ԽՍՀՄ փլուզման տարիներն էին, երբ բեկվում էր նախկին

ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների սոցիալ-տնտեսական համակարգը, իսկ Աղրբեջանը պարտվում էր իր իսկ սանձազերծած պատերազմում, և ողջ տարածաշրջանը համակված էր փախստականների և զաղթականների զանգվածային հոսքերով: Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հետխորհրդային ժամանակահատվածի ժողովրդագրական դինամիկայի մասին ծավալուն զրականություն կա, և բոլոր այդ աղբյուրներն ընդգծում են այդ դինամիկայի էական փոփոխությունը 90-ականների սկզբից մինչև դարավերջ [3]: Սակայն, չնայած դրան, 90-ականների սկզբին Աղրբեջանի բնակչության հայկական, ռուսական, հրեական և այլ հատվածների հեռացմանը, Աղրբեջանից ինտենսիվ արտազարթի գործընթացներին, այնուամենայնիվ, ՍԱԿ ԺՏ 1993-98թթ. տեղեկագրերը, ամենայն հավանականությամբ հետևելով պաշտոնական Բարվի տվյալներին (եթե ոչ ցուցումներին), հնարավոր են համարում ամրագրել Աղրբեջանի բնակչության մոտ 1.0%-ոց տարեկան աճ 1990-95թթ. ժամանակահատվածի համար:

Էլ ավելի զավեշտալի մանրամասներ ի հայտ են գալիս այս աղյուսակի մնացած տվյալները զննելիս: Այսպես, համաձայն ՍԱԿ ԺՏ 1998թ. տեղեկագրի (հրատարակված Նյու Յորքում 2000թ. գարնանը), Աղրբեջանի բնակչությունը գնահատված է 7.665 մլն մարդ, բայց ուշագրավն այն է, որ որպես բազային տարի վերցված է 1999-

ը, այսինքն՝ նորանկախ Աղբեջանի առաջին մարդահամարի իրականացման տարին<sup>1</sup>: Մինչդեռ, անգամ 2000թ. վերջի դրությամբ ոչ միայն ավարտված չէին 1999թ. մարդահամարի տվյալների ամփոփումը և վերլուծումը, այլև բացակայում էր դրա նախնական արդյունքների պաշտոնական հրապարակումը [4]:

Իսկ ամենազարմանալին ՄԱԿ ԺՏ 1998թ. տեղեկագրի՝ Աղբեջանի բնակչության սեռական կազմի մասին տվյալներն են: Համաձայն ՄԱԿ ԺՏ 1997թ. տեղեկագրի՝ բազային էր համարվում 1989-ը՝ մարդահամարի արդյունքով ամրագրված 3.424 մլն մարդ արական և 3.597 մլն մարդ իգական սեռի բնակչության համամասնությամբ (48.8% արական, 51.2% իգական): Սակայն, մեկ տարի անց, ՄԱԿ ԺՏ 1998թ. տեղեկագրում, առանց որևէ բացատրության և պարզաբանման, բազային է համարվել դեռևս չհրապարակված 1999թ. մարդահամարի ենթադրաբար նախնական արդյունքներով ամրագրված միանգամայն նոր համամասնություն՝ 4.119 մլն մարդ արական և 3.834 մլն մարդ իգական սեռի (51.8% արական, 48.2% իգական): Զվարճակին այն է, որ ևս 3 տարի հետո, ՄԱԿ ԺՏ 2001թ. տեղեկագրում, կրկին առանց որևէ բացատրության ու պարզաբանման, վերականգնված է ճիշտ

նույն համամասնությունը՝ 48.8% արական, 51.2% իգական, սակայն արդեն նոր բացարձակ թվերով՝ 3.883 մլն մարդ արական և 4.070 մլն մարդ իգական սեռի բնակչություն (Աղբեջանի բնակչության սեռային կազմին կանդրադառնանք ստորև):

Դատմությունը գրեթե կրկնվում է 10 տարի հետո՝ Աղբեջանի 2009թ. ապրիլյան մարդահամարի հետ կապված: ՄԱԿ ԺՏ 2008թ. տեղեկագրում (հրատարակված Նյու Յորքում 2010թ.) Աղբեջանի բնակչությունն այդ տարի գնահատված է 8.68 մլն մարդ, իսկ բազային է համարվել 2009թ. մարդահամարի նախնական՝ 8.922 մլն մարդ բնակչության գնահատականը: Սակայն այս անգամ, կարծես ցանկանալով խուսափել արտառող թվերի ներկայացումից, ՄԱԿ ԺՏ 2008թ. տեղեկագիրը զերծ է մնում Աղբեջանի բնակչության սեռական կազմի մասին բազային տվյալներ բերելուց: Ի դեպ, հաջորդ՝ 2009թ. այդպես էլ չհրատարակվեց ՄԱԿ ԺՏ ավանդական տեղեկագիրը, այն լույս տեսավ միայն 2011թ. ուր աշնանը, ՄԱԿ ԺՏ 2009-2010թթ. միացյալ հրատարակումով (սա ՄԱԿ ԺՏ տեղեկագրերի ավելի քան կեսդարյա պատմության մեջ արտառող երևույթ է):

Վերջապես, Այդուսակ 2-ում բերվող ՄԱԿ ԺՏ տվյալները պարունակում են ևս մեկ անհասկանալի կողմէ: Այսպես, համաձայն ՄԱԿ ԺՏ 1995թ. տեղեկագրի UN PD սեփական փորձագիտական գնահատման, Աղբեջանի *de jure* բնակչությունն այդ տարի կազմել էր 7.499 մլն մարդ: Իսկ համաձայն ՄԱԿ ԺՏ 1999թ. տեղեկագրի, ուր իրականացված է 1995թ. տարեմիջյան գնահա-

<sup>1</sup> Աղբեջանի նախագահ Հ.Ակիկի 1996թ. փետրվարի 22-ի թիվ 442 հրամանագրով նախատեսվում էր երկրի մարդահամարի անցկացում այդ թվականին: Այնուհետև մարդահամարի անցկացման ժամկետն առնվազն երեք անգամ հետաձգվել էր: Մարդահամարը ՄԱԿ ԺՏ օճանդակությամբ վերջապես իրականացվեց 1999թ. հունվարի 27-ից փետրվարի 3-ը:

տականը, այն կազմել է արդեն 7.685 մլն մարդ *de jure* բնակչություն։ Որտեղից գոյացավ 186 հազ. լրացուցիչ բնակչությունը՝ աղբյուրը չի պարզաբանում։ ՄԱԿ ԺՏ տեղեկագրերը չեն մեկնաբանում նաև այն հանգամանքը, որ 1995թ. տարեմիջյան այսպիսի արտառոց գնահատականը (7.685 մլն մարդ *de jure* բնակչություն) զգալիորեն փոքր է ՄԱԿ ԺՏ կողմից 1996, 1997 և նույնիսկ 1998թթ. Աղբեջանի բնակչության սեփական նախնական գնահատականներից (7.544, 7.625 և 7.665 մլն մարդ համապատասխանաբար)։ Բայց սա դեռ ոչինչ։ Համաձայն ՄԱԿ ԺՏ 2001թ. տեղեկագրի, 1995թ. համար վերահաստատված է բնակչության նույն արտառոց 7.685 մլն մարդ գնահատականը, սակայն այս անգամ ոչ թե *de jure*, այլ *de facto*։ Սա, իրոք, արտառոց երևույթը է ժողովրդագրական վիճակագրական միջազգային պրակտիկայում։

ՄԱԿ ԺՏ 2000թ. տեղեկագրում Աղբեջանի բնակչությունը գնահատված է 8.049 մլն մարդ։ Հաջորդ տարիների հրատարակումները հաստատում են այս թիվը, և այսպես՝ մինչև ԺՏ 2007թ. տեղեկագիրը, ուր 2000թ. համար իրականացված տարեմիջյան գնահատականն ունի արդեն 8.39 մլն մարդ արժեք։ Դե, իսկ ԺՏ 2010թ. միացյալ հրատարակումը նույն այդ 2000թ. տարեմիջյան գնահատականը հասցրել է մինչև 8.5 մլն մարդու։ Եվ նորից՝ ոչ մի բացատրություն կամ պարզաբանում, թե որտեղից և ինչպես հայտնվեց այս 0.5 մլն հավելյալ բնակչությունը։

Կարծում ենք, կան բոլոր հիմքերը պնդելու, որ ՄԱԿ ԺՏ մեր կողմից բննված տեղեկագրերն արտացոլում են պաշտոնական

Բարվի մեքենայությունները հանրապետության բնակչության թվաքանակի արհեստական բարձրացման ուղղությամբ։ Ավելին, կարծում ենք, որ հետևելով և հրապարակելով պաշտոնական Բարվի տրամադրած այս անհավաստի տվյալները՝ ՄԱԿ ԺՏ նշված տեղեկագրերը յուրօրինակ կերպով «վավերացնում» են դրանք՝ վերջիններիս վերցնելով հեղինակավոր միջազգային կազմակերպության հովանոցի տակ։ Նշված մեքենայությունները թույլ տվեցին ԺՏ 2005-10թթ. տեղեկագրերում այդ ժամանակահատվածի համար նշել ԱՀ բնակչության տարեկան մոտ 1.0% աճ, որը, ըստ 2010թ. տեղեկագրի, կազմել է նույնիսկ 1.2% (Աղբեջանի բնակչության տարեկան աճի բննությանը դեռ կանդրադառնանք ստորև)։

Աղյուսակ 3. Աղբեջանի բնակչությունը՝ ըստ ԱՄՆ ԿՀՎ տվյալների

Տարի	Մարդ	Բնակչությունը ըստ ԿՀՎ-ի	Գնահատման տարեթիվը	Տարեկան աճը	Ծնունդ		
					Մարդ	1000 մարդու հաշվով	Չափացիություն
2000	7 748 163	Հուլիս 2000 est.		0.27%	18.08	9.47	-5.92
2001	7 771 092	Հուլիս 2001 est.		0.32%	18.44	9.55	-5.67
2002	7 798 497	Հուլիս 2002 est.		0.38%	18.84	9.61	-5.41
2003	7 830 764	Հուլիս 2003 est.		0.44%	19.28	9.68	-5.16
2004	7 868 385	Հուլիս 2004 est.		0.52%	19.81	9.76	-4.9
2005	7 911 974	Հուլիս 2005 est.		0.59%	20.4	9.86	-4.64
2006	7 961 619	Հուլիս 2006 est.		0.66%	20.74	9.75	-4.38
2007	8 120 247	Հուլիս 2007 est.		0.69%	17.47	8.35	-2.25
2008	8 120 247	Հուլիս 2007 est.		0.69%	17.47	8.35	-2.25
2009	8 238 672	Հուլիս 2009 est.		0.76%	17.62	8.3	-1.69
2010	8 303 512	Հուլիս 2010 est.		0.81%	17.75	8.28	-1.42
2011	8 372 373	Հուլիս 2011 est.		0.85%	17.85	8.25	-1.14

Աղյուրը՝ US CIA World Fact Books [1].

Հիմնովին այլ է պատկերը, եթե անդրադառնանք Աղբեջանի բնակչության մասին ԱՄՆ ԿՀՎ տվյալներին: Այսպես, համաձայն ԿՀՎ «World FactBook» տեղեկատուի, Աղբեջանի բնակչությունը 2011թ. կազմել է 8.372 մլն մարդ (2011թ. հուլիսի գնահատական): Այսինքն՝ մոտ 740 հազարով ավելի քիչ, քան ԱՎՊԿ համապատասխան գնահատականը: Աղյուսակ 3-ում ամբողջացնում ենք Աղբեջանի բնակչության մասին ԿՀՎ տվյալները: Համեմատելով դրանք պաշտոնական Բարվի տվյալների հետ՝ տեսնում ենք, որ ԿՀՎ գնահատականների համեմատ Աղբեջանի բնակչության պաշտոնական թվի գերազնահատումն ունի հաստատուն բնույթ՝ այս էլ տասը տարուց ավելի: Ինչպես տեսնում ենք այս աղյուսակից, այստեղ ոչ մի խոսք չի կարող լինել Աղբեջանի բնակչության տարեկան 1.0% և ավելի աճի մասին: Հակառակը, Աղբեջանի բնակչության տարեկան աճը 90-ականների կեսերից անկում է ապրում մինչև 0.22% ցուցանիշը և, համաձայն ԿՀՎ տվյալների, սկսում է ավելանալ միայն 2000-ից: Այդ տարի ԿՀՎ-ի կողմից արձանագրված է բնակչության 0.27% տարեկան աճ: Հիշեցնենք, որ համաձայն պաշտոնական Բարվի, 2000թ. բնակչության տարեկան աճը կազմել էր 1.0% (տե՛ս Աղյուսակ 1): Նույնքան էր կազմել նաև Աղբեջանի բնակչության տարեկան աճը 2000-07թթ. ժամանակահատվածում՝ համաձայն ՄԱԿ ԺՏ 2007թ. տեղեկագրերի (տե՛ս Աղյուսակ 2):

Նշված տարբերություններն առավել ցայտուն դարձնելու համար Նկար 2-ում պատկերել ենք ԱՎՊԿ և ԿՀՎ գնա-


## Աղբեջանսկան ՀԱՐՍՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## «ԿԻՐՏՈՒՆ» ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՇԽԱՎԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

հատականների տարբերությունը: Նկարից տեսնում ենք, որ անցած 11 տարիների ընթացքում ԱՎՊԿ տվյալները գերազանցում են ԿՀՎ համապատասխան տվյալները միշտնը մոտ կես միլիոնով: Ընդ որում, եթե 2000թ. այս տարբերությունը կազմել էր 285 հազ. մարդ, ապա 2011թ. այն արդեն մոտ 740 հազ. մարդ է: Առավել մտահոգիչն այն է, որ այս գերազնահատումը չի վերացել կամ գոնե նվազել 2009թ. Աղբեջանում անցկացված մարդահամարից հետո: Հակառակը, տվյալների տարբերությունը շարունակում է աճել:

Նկար 2. Աղբեջանական Հանրապետության բնակչության թվի  
տարբերությունը ԱՎՊԿ և ԱՄՆ ԿՀՎ տվյալների միջև. հազ.

մարդ



Կատարենք մի քանի պարզաբանում: Նախ, զրեթե բոլոր երկրների ազգային վիճակագրական ծառայություններին բնորոշ են սեփական հրապարակումների անընդհատ շտկումն ու վերահաշվարկը: Այս վերահաշվարկի արդյունքները նույնպես անընդհատ տպագրվում են ծառայությունների ընթացիկ հրապարակումներում: Եվ ժամանակի ընթացքում երբեմն դժվար էր լինում հետևել կատարված փոփոխություններին: Դրությունն էլ ավելի է սաստկացել մեր՝ էլեկտրոնային հրապարակումների ժամանակներում, եթե մշտապես թարմացվող կայքերում ընթացիկ շտկումների առկայությունը կարելի է տեսնել միայն ժամանակին տպագիր նյութերի հետդրանց համեմատությամբ, կամ էլ անընդհատ բեռնելով և պահպանելով կայքերում բերվող տվյալները՝ դրանց հետազավերլու ժամանակամատման ժամանակ, և, օրինակ, ԿՀՎ տվյալները բերում ենք ըստ 2000-2010թթ. համապատասխան տպագիր տեղեկատունների [1]: Նույնը վերաբերում է նաև ՄԱԿ ԺՏ 1992-2010թթ. տեղեկագրերին [2]:

Հաջորդ հանգամանքն այն է, որ ԿՀՎ՝ բնակչության մասին բերվող տվյալները հենվում են ԱՄՆ Մարդահամարների բյուրոյի

սղորեքսսսկան հաշրպետություն:  
«Կիրտում» ժողովրուագրության սուսանսաւագությունները


(US Census Bureau)<sup>1</sup> կողմից մշակված մոդելների արդյունքների վրա, սակայն օգտագործում են տվյալ երկրից ստացվող նաև այլ տվյալները, այդ թվում՝ պաշտոնական: 2007թ. սկզբին ԿՀՎ մոդելը ֆիրսել էր Աղրբեջանից ստացվող բնակչության ժողովրդագրական տվյալների հավաստիության կորուստ, ինչն էլ ստիպեց ԿՀՎ փորձագետներին հաջորդ տարի ընդհանրապես հրաժարվել Աղրբեջանի բնակչության իրական ժողովրդագրական պատկերի որևէ գնահատականից: Արդյունքում՝ 2008թ. ԿՀՎ տեղեկատուն պարզապես կրկնում է նախորդ տարվա բերված գնահատականները (տե՛ս Աղյուսակ 2): Հավելյալ մանրամասները տե՛ս World FactBook 2007 և World FactBook 2008 [1]):

Վերջապես, անհրաժեշտ է նկատել, որ զրեթե բոլոր հետխորհրդային հանրապետությունների պաշտոնական վիճակագրական ծառայություններին մինչև 2000-ական թվականների սկիզբը բնորոշ էր տվյալների շոշափելի խոտանը: Դա հատկապես նկատելի էր բնակչության ընդհանուր թվի, ինչպես նաև բնակչության ազգային պատկանելության մասին տվյալներում:

Օրիենտիվության համար անդրադառնանք Հայաստանի Հանրապետության բնակչության *de facto* թվի մասին պաշտոնական տվյալների պատմությանը, որը պատկերել ենք Նկար 3-ում [5, pp. 22-23]: Մինչև 2001թ. մարդահամարը, Հայաստանի ընդհանուր

<sup>1</sup> Իսկ 2011թ. տվյալները՝ ԱՄՆ ԿՀՎ կայքիցից, ս.թ. սեպտեմբերի դրությամբ:

<sup>1</sup> <http://www.census.gov/>



բնակչության մասին պաշտոնական տեղեկատվությունը հիմնված էր 1979 և 1989թթ.<sup>1</sup> Մարդահամարների արդյունքների վրա: 2003թ. սկզբին, եթե հրապարակվեցին 2001թ. մարդահամարի պաշտոնական արդյունքները [6], Հայաստանի ընդհանուր բնակչության պաշտոնական տվյալները գերազանցում են ԿՀՎ տվյալները մոտ 500-600 հազ. մարդով՝ սկսած դեռ 1993-

<sup>1</sup>ՀԱՍՀ 1989թ. մարդահամարի արդյունքները հանվեցին պաշտոնական շրջանառությունից այն բանի համար, որ Սպիտակի աղետայի երկրաշրժի ողբերգական հետևանքների պարագայում անհնարին էին մարդահամարի պատշաճ մակարդակով իրականացումը և տվյալների հավաստի մակարդակի ապահովումը:

94-ից: 2001թ. մարդահամարի արդյունքների պաշտոնական հրապարակումը Հայաստանում էապես շտկեց ժողովրդագրական վիճակը: Արդյունքում՝ ՀՀ ընդհանուր բնակչության պաշտոնական թվի մեջ 2003թ. արձանագրվեց իրադրությունն առողջացնող կորեկցիա՝ թոփշրած նվազում 2001թ. 3.82 մինչև 3.2 մլն մարդ 2002թ. (տե՛ս Նկար 3 և [6]):

Միջազգային և այլ կազմակերպությունների կողմից այս ճշգրտումը համարվեց արժանահավատ, ինչն էլ հանգեցրեց նրանց կողմից տպագրվող տվյալների շտկմանը: Դա նկատելի է հենց ԿՀՎ տվյալներում: Կարծում ենք, որ 2011թ. հոկտեմբերին իրականացված ՀՀ մարդահամարն ավելի կրաքելավի իրադրությունը: Հավելենք, որ 2001թ. մարդահամարի պաշտոնական տվյալների բարձր արժանահավատության գնահատումը նպաստեց Հայաստանում 2003-ից ի վեր անցկացվող համապետական ընտրությունների արդյունքներին միջազգային կազմակերպությունների կողմից տրվող ընդհանուր առմամբ դրական գնահատականներին<sup>1</sup>:

Համեմատելով այս իրավիճակն Աղբբեջանի բնակչության թվի մասին ԱՎՊԿ պաշտոնական տվյալների հետ՝ հարկադրված ենք փաստելու, որ այս երկրում 2009թ. մարդահամարի արդյունքները

<sup>1</sup>Հասկանալի է, որ դա չէր միակ պատճառը:

չեն հանգեցրել իրավիճակի շտկմանը: Իրոք, 2011թ. հուլիսի 22-ին վերջապես հրապարակվեցին Աղբբեզանի 2009թ. ապրիլյան մարդահամարի տվյալները, այն էլ մասնակիորեն: Սույն ուսումնասիրության պատրաստման պահին (2011թ. սեպտեմբերի դեկտեմբեր) դրանք ԱՎՊԿ պաշտոնական կայքում տեղաբաշխված էին ոչ թե որպես առանձին հրատարակում, այլ տարրալուծված էին կայքի համապատասխան բաժիններում:

Այս տվյալների բննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ՝

- Աղբբեզանի բնակչության թվի մասին տվյալները շարունակում են մնալ չդասակարգված ըստ *de jure* կամ *de facto* բնակչության, հաշվի չեն առնում անցումային ժամանակաշրջանում հետխորհրդային բոլոր հանրապետություններին բնորոշ էական միզրացիոն գործընթացները՝ անզամ մարդահամարի անցկացումից հետո,
- բնակչության ընդհանուր թվի մասին ԱՎՊԿ պաշտոնական տվյալները հիմնված են պարզունակ, զգային էքստրապոլյացիայի վրա և աղավաղում են բնակչության աճի իրական պատկերը, ինչպես նաև խեղաթյուրում են ծնունդների և մահացության մասին տեղեկատվությունը,
- պաշտոնական Բարվի ժողովրդագրական վիճակագրությունը խեղաթյուրում է բնակչության սեռական

կազմի մասին տվյալները, հատկապես իզական բնակչության մասով,

- շարունակելով տասնամյակների պատմություն ունեցող արատավոր մոտեցումը՝ պաշտոնական Բարվի ժողովրդագրական վիճակագրությունը խեղաթյուրում է հանրապետության բնակչության ազգային կազմի մասին տվյալները:


Ստորև այս հարցերը դիտարկվում են ավելի հանգամանալիորեն:

բնակության Աղբբեջան ժամանած մարդկանց թիվը կազմել էր 84.3 հազ., մեկնածներինը՝ 138 հազ. մարդ: 2010թ. դրանք կազմել էին 2.2 հազար և 800 մարդ համապատասխանաբար: Զուտ միգրացիան (net migration, կայքի անզերեն տարբերակում) դառնում է դրական 2008-ից սկսած:

## Գլուխ 2.

### ՄԻԳՐԱՑԻԱՆ ԱԴՐԵՑԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ

Հիմնվելով ԱՎՊԿ պաշտոնական կայքում գետեղված<sup>1</sup> Աղյուսակ 1.26. «Բնակչության միջազգային միգրացիա» (*Thalinin beynəlxalq miqrasiyası*) տվյալների վրա՝ Նկար 4-ում պատկերել ենք միգրացիոն հոսքերի մասին պաշտոնական Բարվի տվյալները: Խնչպես տեսնում ենք այս նկարից, որպես «միգրացիոն հոսքեր» նշված աղբյուրը ներկայացնում է միայն այսպես կոչված «մշտական բնակության» մեկնած կամ ժամանած մարդկանց թիվը: Համաձայն այս աղբյուրի, 1990թ. մշտական



<sup>1</sup> [http://www.azstat.org/statinfo/demographic/az/AZ\\_1.shtml](http://www.azstat.org/statinfo/demographic/az/AZ_1.shtml)

Այլ պատկեր է ի հայտ գալիս միջազգային աղբյուրները քննելիս: Ի տարբերություն ԱՎՊԿ-ի՝ դրանք ցանկացած երկրի բնակչության թիվը գնահատելիս բժախնդրորեն հաշվի են առնում միգրացիոն հոսքերն ամբողջությամբ, այսինքն՝ ա) մեկ տարի և ավելի արտերկրում գտնվող աշխատանքային միգրանտներ (էմիգրանտներ և իմիգրանտներ), բ) փախստականներ, զ) ապատարան հայցողներ, դ) տեղահանվածներ, ե) բռնազարդածներ և այլն: ԱՎՊԿ նշված աղբյուրում նման դասակարգումն ու դիտարկումն իսպառ բացակայում է:

Մինչեռ, համաձայն Միգրացիայի ուսումնասիրման միջազգային կազմակերպության (*IoM*)<sup>1</sup> տեղեկատուների, 2005թ. վերջի դրությամբ Աղրբեջանից էմիգրացիան կազմել էր 1.365 մլն մարդ, ինչը, նույն աղբյուրի գնահատականով, կազմում էր այդ տարի Աղրբեջանի *de jure* բնակչության 16.2%-ը<sup>2</sup> [7, p. 17]: Այսպիսով, այդ տարի ԱՀ բնակչությունը, համաձայն *IoM*-ի, կազմել էր 7.06 մլն մարդ: ԿՀՎ 2005թ. տեղեկատուն [1] տալիս է մոտ գնահատական՝ 7.9 մլն մարդ (2005թ. հուլիսի գնահատական), այդ տարի գուտ միգրացիան գնահատելով -4.64 միգրանտ 1000 մարդ բնակչության հաշվով, այսինքն՝ -36.7 հազ. մարդ: Իսկ ԱՎՊԿ պաշտոնական տվյալներով՝ 2005թ. Աղրբեջանի բնակչությունը կազմել

էր 8.5 մլն մարդ, զուտ միգրացիան՝ 900 մարդ (տե՛ս նկարում), այսինքն՝ «զուտ միգրացիայի» առումով 41 անգամ ավելի քիչ, քան ԿՀՎ գնահատականը:

Միգրացիոն հոսքերի տեսանկյունից համակողմանի աղբյուր է հանդիսանում Համաշխարհային բանկի «Զարգացման հեռանկարները» հանձնախմբի (ՀԲ ԶՀՀ, *WB DPG*) «Միգրացիա և դրամային փոխանցումներ» հայտնի տեղեկատուն<sup>1</sup>: Համաձայն այդ տեղեկատուի, 2010թ. Աղրբեջանից արտերկրում էր գտնվում 1.43 մլն էմիգրանտների «բանակը» (*Stock of emigrants*), ինչը կազմում էր այդ տարի Աղրբեջանի բնակչության 16%-ը [8, c. 75]: Աղրբեջանից արտերկրում էմիգրանտների թվով ուկորդային էր 2008-ը՝ 1.55 մլն էմիգրանտ ցուցանիշով: Հաջորդ տարի այս թիվը նվազում է մինչև 1.2 մլն, անշուշտ՝ գլոբալ ֆինանսական ճգնաժամի հետևանքով [8]:

Հարկավոր է հաշվի առնել, որ արտերկրում գտնվող միգրանտների մասին ՀԲ ԶՀՀ տվյալները կոնսերվատիվ են, քանի որ ներառում են միայն այն միգրանտներին, որոնց համար ֆիքսված են դրամային փոխանցումներ բանկային համակարգի միջոցով: Այսպիսով, ՀԲ ԶՀՀ տեսադաշտից դուրս են մնում դրամային փոխանցումներ չիրականացնող միգրանտները և այն միգրանտները, որոնք իրենց փոխանցումներն իրականացնում են այլ կերպ:

<sup>1</sup> <http://www.iom.int/jahia/Jahia/lang/en/pid/1>

<sup>2</sup> *IoM*-ի համաձայն՝ այս գնահատականները թերագնահատող (լրոնտերվածիվ) են: Մեջբերելով [9] հետազոտության արդյունքները՝ աղբյուրն Աղրբեջանից իրական արտագաղթը գնահատում է երկու *de jure* բնակչության 16-25%-ի շահով:

<sup>1</sup> World Bank, Development Prospects Group. *Migration and Remittances Factbooks*.

Թիվականները	Աղյուր երկիրը				Անդրկովկասից
	Աղրբեջան	Վրաստան	Հայաստան		
1	ՌԴ	866 843	644 390	493 126	2 004 359
	Հայաստան	164 483	75 792		240 275
	Այլ Հարավ	145 784	98 123	76 329	320 236
	Ուկրաինա	92 536	72 410	53 193	218 138
	Ղազախստան	38 921	2 635	7 357	48 912
	Իսրայել	35 101	26 032	16 509	77 643
	Գերմանիա	23 265	18 164	15 515	56 944
	Թուրքիա	18 807	7 295	891	26 993
	ԱՄՆ	9 689	25 310	77 208	112 206
	Թուրքմենստան	7 895	0	7 248	15 142
Ամբողջ		1 433 513	1 058 300	870 458	3 362 271

Աղյուրը՝ <http://go.worldbank.org/JITC7NYTT0>

ՀԲ ԶՀՀ հիշյալ աղյուրը հետաքրիր է նրանով, որ այն միգրացիան զնահատում է երկկողմ և բազմակողմ կտրվածքով, ինչը հանգեցնում է ուշագրավ տեղեկատվության: Այսպես, ՀԲ ԶՀՀ փորձագետները կազմել են աշխարհի 215 երկրների փոխադարձ միգրացիայի  $215 \times 215$  չափողականության երկկողմ մատրիցը (*Bilateral migration matrix*), որը թարմացնում են այս էլ մոտ մեկ տասնամյակ: Նշենք, որ այս մատրիցի տվյալները հիմք են հանդիսանում գրեթե բոլոր այլ միջազգային կառույցների համար (UN, IoM, OECD, IMF և այլն) միգրացիային նվիրված իրենց ուսումնասիրություններում և երկրների բնակչության թվի իրենց զնահատականներում: Հենվելով 2010թ. ՀԲ ԶՀՀ միգրացիոն երկկողմ մատրիցի վրա՝ մենք այն պարզեցրել ենք, առանձնացնելով Հարա-

վային Կովկասի երեք հանրապետություններին վերաբերող տվյալները (տե՛ս Աղյուսակ 4): Ընդ որում, այստեղ բերում ենք արտերկրում գտնվող աղրբեջանցի միգրանտների միայն առաջին տասնյակ երկրների տվյալները, իսկ ամբողջական աղյուսակը բերում ենք Հավելված 1-ում (Աղյուսակ 1.1): Նույն հավելվածում բերում ենք նաև հակառակ մատրիցը, որը ցույց է տալիս, թե քանի միգրանտ կա այլ երկրներից Հարավային Կովկասի երեք հանրապետություններում (Աղյուսակ 1.2):

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 4-ից, 2010թ. վերջի դրությամբ Աղրբեջանից արտերկրում գտնվող 1.433 մլն միգրանտներից ՌԴ-ում էին գտնվում մոտ 867 հազ. մարդ կամ ընդհանուր թվի մոտ 60%-ը (Վրաստանից՝ 644 հազ. մարդ կամ մոտ 60%-ը, Հայաստանից՝ 493 հազ. մարդ, մոտ 56%-ը)<sup>1</sup>: Ընդհանրապես, այդ տարվա վերջի դրությամբ Անդրկովկասի երեք հանրապետություններից ՌԴ-ում էր գտնվում 2.0 մլն մարդ: Ուշագրավ է, որ Իսրայելում Աղրբեջանից միգրանտների թիվը մոտ 10 հազարով ավելին է, քան Վրաստանից, և մոտ 20 հազարով՝ Հայաստանից արտազարդաների թվից: Աղրբեջանական Հանրապետությունից Հայաստանում գտնվող 164.5 հազար մարդիկ, ըստ ՀԲ մեթոդաբանության, մեր այն հայրենակիցներն են, որոնց համար ՀԲ ԶՀՀ փորձագետներն արձանագրել են դրամական փոխանցումներ Հայաստանից դուրս:

<sup>1</sup>Հշեցնենք, որ սրանք այն միգրանտներ են, որոնց համար բանկային համակարգով ֆիքսված են դրամային փոխանցումներ:

Մեծ հավանականությամբ կարելի է ենթադրել, որ այդ փոխանցումները հասցեագրված էին Արցախում գտնվող իրենց հարազատներին:

ՀԲ ԶՀՀ միգրացիայի երկկողմ մատրիցը դեռ ամենը չէ: Հենվելով դրա, ինչպես նաև բանկային համակարգերից ստացված տեղեկատվության վրա՝ ՀԲ ԶՀՀ փորձագետները կազմում են նաև միգրանտների դրամային փոխանցումների (*Inward remittance*)<sup>1</sup> նույն՝ 215 x 215 չափողականությամբ երկկողմ 3 տարբեր մատրիցներ: Առաջինը միգրանտների դրամական փոխանցումների պարզ մատրիցն է՝ արտահայտված ընթացիկ ԱՄՆ դրամով (*Bilateral remittance estimates using migrant stocks*): Երկրորդն այն մատրիցն է, որը ներկայացնում է դրամական փոխանցումները՝ շտկված ըստ թիրախ երկրում եկամուտների մակարդակի (*Bilateral remittance estimates using migrant stocks and destination country incomes*): Երրորդը մատրիցն է թե՝ թիրախ, թե՝ աղբյուր երկրներում եկամուտների մակարդակի շտկմամբ (*Bilateral remittance estimates using migrant stocks, destination country incomes, and source country incomes*):

<sup>1</sup> Նշված աղբյուրն այնուհետև միգրանտների դրամական փոխանցումները տարբերակում է երեք տեսակի. աշխատողների դրամական փոխանցումներ (*Workers' remittances*), աշխատավարձ և միգրանտների ունեցվածքի փոխանցումներ (*Migrants' transfers, Pererevody imyushchestva migrantov*):

Աղյուսակ 5. Դրամական փոխանցումները դեպի Հարավային Կովկասի 3 հանրապետություններ 2010թ., \$մլn	Մտացող երկիր			Անդրկովկասի համար
	Աղբեջական*	Վրաստան	Հայաստան	
1 Ո՞՛	898.657	490.568	436.471	1 825.696
2 Հայաստան*	154.681	45.878		200.559
3 Այլ Հարավ **	137.096	58.045	53.773	248.913
4 Ուկրաինա	87.021	43.361	37.473	167.855
5 Բուրյալ	45.409	27.659	20.071	93.139
6 Ղազախստան	39.057	1.912	6.224	47.193
7 Գերմանիա	33.790	22.790	22.127	78.707
8 Թուրքիա	19.508	5.558	0.789	25.855
9 ԱՄՆ	14.629	33.528	116.034	164.191
10 Թուրքմենստան	7.424		5.330	12.755
Ըստհանուրը՝ 2010թ.	1 472	824	824	2 296

\* Համաձայն ՀԲ ԶՀՀ մեթոդականության, այսուհետ խորը Հայաստանից Արցախ և Արցախից Հայաստան փոխանցումների մասին է:

\*\* «Այլ Հարավ» խմբում աղբյուրում ենթակացված են Աֆրիկայի և Ասիայի մի շարք փոքր պետություններ Աղյուրը՝ <http://go.worldbank.org/JTC7NYTT0>

Հենվելով այս վերջին մատրիցի տվյալների վրա՝ առանձնացրել ենք Հարավային Կովկասի երեք հանրապետություններին վերաբերող հատվածը (տե՛ս Աղյուսակ 5): Այստեղ բերում ենք դեպի Աղբեջական դրամային փոխանցումների ծավալով առաջին տասնյակ երկրների տվյալները: Ամբողջական աղյուսակը բերում ենք Հավելված 1-ում (Աղյուսակ 1.3), ուր բերում ենք նաև հակառակ մատրիցը (Աղյուսակ 1.4), որը ցույց է տալիս, թե որքան դրամային փոխանցումներ են իրականացվել Անդրկովկասի երեք հանրապետություններից այլ երկրներ:

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 5-ից, 2010թ. (աշխարհի 51 երկրներից՝ տե՛ս Հավելված 1) Աղրբեջան է փոխանցվել է \$1,472 մլրդ (Վրաստան և Հայաստան՝ մոտ \$0.8 մլրդ): Ընդ որում, ՌԴ-ից Աղրբեջան է փոխանցվել մոտ \$900 մլն (Վրաստան՝ \$491 մլն, Հայաստան՝ \$437 մլն): Իսկ Հայաստանից Աղրբեջան է փոխանցվել<sup>2</sup> մոտ \$155 մլն (Վրաստան՝ մոտ \$45 մլն):

Միևնույն ժամանակ, 2010թ. Աղրբեջանից Հայաստան է փոխանցվել մոտ \$33.6 մլն (Վրաստանից՝ \$3.5 մլն, տե՛ս Հավելված 1): Այսպիսով, Հայաստանի և Աղրբեջանի միջև դրամական փոխանցումների հաշվեկշիռը կազմում է մոտ \$118 մլն՝ Հայաստանից դեպի Աղրբեջան: Համաձայն ՀԲ ԶՀՀ մեթոդաբանության, խորն այստեղ Հայաստանից Արցախ և Արցախից Հայաստան փոխանցումների մասին է: Նշենք, որ Հայաստանից

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի տվյալներով՝ 2010թ. Վերջի դրույթամբ հանրապետության բանկային համակարգի միջոցով արտասահմանից Հայաստան կատարվել են ֆիզիկական անձան դրամական փոխանցումներ՝ \$1,627 մլրդ-ի չափով, իսկ Հայաստանից արտասահման՝ \$731.6 մլն: Այսպիսով, Հայաստան փոխանցումների գուտ հաշվեկշիռը կազմել է \$895.5 մլն: Հայաստան կատարված ընդհանուր փոխանցումների 76.1%-ը և Հայաստանից կատարված փոխանցումների 38.3%-ը բաժին են ընկեր ՌԴ-ին և ԱՄՆ-ի միավին: Դրամական փոխանցումների մասին ՀԲ ԶՀՀ և Հայաստանի Կենտրոնական բանկի թերած զնահատականների տարերությունը մասամբ բացատրվում է այն հանգամանքով, որ իր զնահատականները Հայաստանի ԿԲ-ն թերութ է անմիջապես ԱՄՆ դոլարով՝ պաշտոնական փոխարժեքով: Այնինչ, ՀԲ ԶՀՀ տվյալները, որոնք մենք ներկայացնում ենք վերը, ճշտված են ըստ դրամական փոխանցումներն ուղարկող և ստացող երկրների Եկամուտների մակարդակների (զնողունակության): <http://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

<sup>2</sup> Ինչպես նշել ենք վերը, համաձայն ՀԲ ԶՀՀ մեթոդաբանության՝ այստեղ խոսքը Հայաստանից Արցախ և Արցախից Հայաստան փոխանցումների մասին է:

Նկար 5. Էմիգրանտների կողմից կատարված դրամական փոխանցումները երկիր (մլն ԱՄՆ \$)



Արցախ փոխանցումների այս ծավալը գրեթե հավասար է ողջ աշխարհի զարգացած երկրներից Աղրբեջանական Հանրապետությանը տրամադրված զարգացման պաշտոնական օգնության ծավալներին (*Official development assistance*, \$200 մլն, տե՛ս [8]): Իսկ Էմիգրանտների կողմից Աղրբեջան կատարված դրամական փոխանցումների ընդհանուր ծավալը 2010թ. վերջի դրույթամբ (\$1.5 մլրդ) համեմատելի է այս երկրի նույն ժամանակաշրջանի ուկու-արժույթի ռազմավարական պաշարներին (\$6.4 մլրդ, տե՛ս [1]): Կարծում ենք՝ այս տվյալները կզարմացնեն Աղրբեջանական Հանրապետության մեր որոշ գործընկերներին:

Հենվելով ՀԲ ԶՀՀ տվյալների համակարգչային գրադարանի վրա՝ Նկար 5-ում պատկերել ենք էմիգրանտների կողմից Աղբեջան ուղարկված դրամական փոխանցումների ծավալների փոփոխությունը 1995-2010թթ. համար (ընթացիկ \$մլն): Համեմատության նպատակով բերել ենք նաև Հայաստանին և Վրաստանին վերաբերող տվյալները: Ինչպես տեսնում ենք այս նկարից, 1997-2001թթ. դեպի Վրաստան կատարված դրամական փոխանցումները կազմել են տարեկան մոտ \$400 մլն և ավելի քան երկու անգամ զերազանցել են Հայաստան կամ Աղբեջան ուղարկված փոխանցումները: 2004-ից սկսած՝ Հայաստան ուղարկված փոխանցումներն աճում են՝ զերազանցելով Վրաստանի ցուցանիշը, և հասնում իրենց առավելագույն արժեքին՝ \$1.062 մլրդ 2008թ.: Հաջորդ տարիներին համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքով դրանք նվազում են և 2009-2010թթ. կազմում տարեկան մոտ \$800 մլն: Իր հերթին, 2005-ից սկսած՝ շեշտակիորեն աճում են Աղբեջան ուղարկված դրամային փոխանցումների ծավալները՝ այդ տարի զերազանցելով Հայաստանի ցուցանիշը: Դրանք հասնում են իրենց առավելագույն արժեքին՝ մոտ \$1.6 մլրդ, նույն 2008թ.: Հաջորդ տարիներին, նույն պատճառով, դրանք նվազում են և 2009-2010թթ. կազմում տարեկան մոտ \$1.2 և \$1.4 մլրդ համապատասխանաբար:

Ի դեպ, այլ է պատկերը, եթե դիտարկենք դրամական փոխանցումների տեսակարար ցուցանիշները, այսինքն՝ մեկ միզ-



րանտի կողմից կատարված միջին տարեկան փոխանցումներն իր երկիր: Այս ցուցանիշը հաշվարկել ենք՝ հիմնվելով ՀԲ ԶՀՀ-ի կողմից կազմված արտերկրում գտնվող էմիգրանտների քանակային մատրիցի և դրամական փոխանցումների մատրիցի համադրության վրա: Նկար 6-ում պատկերել ենք 2003-2010թթ. արդյունքները Հրվ. Կովկասի երեք հանրապետությունների համար: Բերված արդյունքները վկայում են, որ մեկ միզրամափոխական փոխանցումների ցուցանիշով Հայաստանը նկատելիորեն զերազանցում է Վրաստանին և համաձայն ՀԲ ԶՀՀ տվյալների՝ զիջում Աղբեջանին միայն 2010թ.:

ՀԲ ԶՀՀ նշված աղբյուրի՝ Աղրբեջանից (և ցանկացած այլ երկրից) աշխատանքային միզրանտների մասին տվյալներն անհուսափելիորեն կոնսերվատիվ են, քանի որ հիմնված են բանկային համակարգով վերջիններիս դրամական փոխանցումների վիճակագրության վրա: Իրոք, համաձայն որոշ ռուսական և աղրբեջանական աղբյուրների [10], Աղրբեջանից արտերկրում (հիմնականում՝ ՌԴ-ում) գտնվող միզրանտների իրական թիվը գնահատվում է 2.0-3.0 մլն մարդ: Դեռ 2001թ. Աղրբեջան կատարած պաշտոնական այցի ժամանակ ՌԴ նախագահ Վ. Պուտինը հայտարարել էր, որ Ռուսաստանում են ապրում 2.7 մլն աղրբեջանցիներ, որոնցից 660 հազ. մարդ ՌԴ քաղաքացի է, մնացածը՝ աշխատանքային միզրանտ [11]: 2002թ. ՌԴ մարդահամարի արդյունքների ամփոփումից հետո այս գնահատականները նվազեցին<sup>1</sup>, սակայն ՌԴ մի շարք հեղինակավոր աղբյուրներ շարունակում են գնահատել այստեղ գտնվող աղրբեջանցիների թվաքանակը մոտ 2.0 մլն մարդ: Այս առումով որոշ ռուս վերլուծաբաններ լրջորեն հարցականի տակ են դրել 2002թ. ՌԴ մարդահամարի արդյունքները՝ պնդելով, որ մարդահամարի ընթացքում հաջողվել է հաշվագրել ՌԴ-ում գտնվող աղրբեջանցիների միայն մոտ 40%-ը [13]:

<sup>1</sup> 2002թ. ՌԴ մարդահամարի տվյալներով՝ այստեղ էր ապրում 621.84 հազ. աղրբեջանցի, որոնցից 154.9 հազարն Աղրբեջանի քաղաքացիներ էին: ՌԴ-ում գտնվող հայերի թիվը, ըստ 2002թ. ՌԴ մարդահամարի տվյալների, կազմել էր 1.13 մլն մարդ, որից 136.8 հազարը ՀՀ քաղաքացիներ էին [12]:

Ավարտելով աղրբեջանցի միզրանտների մասին քննությունը՝ նկատենք, որ այս երևույթի հատկանշական մասն են կազմում նաև արտազնա մարմնավաճառությունը և թրաֆիկինգը: Այն զգալի չափերի է հասել 1995-97թթ. հետո, երբ տնտեսական ճգնաժամի և ընդհանուր բարոյալրման ազդեցության տակ սկսեց արձանագրվել Աղրբեջանից Թուրքիա, Արարական Էմիրություններ, Սիրիա և Իրան աղրբեջանցի կանանց մեկնումը:

Համաձայն վերը հիշատակված *IOM* տվյալների և աղրբեջանական մամուլի որոշ հրատարակումների [14], 1990-1999թթ. միայն Թուրքիայից մարմնավաճառության համար արտաքսվել է 750 աղրբեջանուի, ընդ որում՝ նրանցից 650-ը՝ միայն 1996-99թթ. ժամանակահատվածում: Միայն 2001թ. Թուրքիայից մարմնավաճառության համար արտաքսվել էր 550 աղրբեջանուի: 2001-ից մինչև 2003թ. ապրիլը ԱՍԷ-ից նույն պատճառով արտաքսվել էր 900 աղրբեջանուի: Համաձայն այլ աղբյուրի, միայն 1999թ. փետրվարին բուրբական իշխանությունները գրանցել էին 6 հազ. աղրբեջանուի, որոնք գրանցում էին մարմնավաճառությամբ: Նույն ժամանակ ևս 2 հազ. աղրբեջանուի նման գործունեության համար գրանցվել էր ԱՍԷ իշխանությունների կողմից [15]: Համաձայն աղրբեջանական մամուլի [16], 2000-ական թվականների կեսից ի հայտ են գալիս թրաֆիկինգի և «արտազնա մարմնավաճառության» նոր ուղիներ՝ Եգիպտոս, Հորդանան, Ինդոնեզիա, Թաիլանդ և Հնդկաստան. «յուրաքանչյուր տարի մոտ 1000 աղրբեջանուի թրաֆիկինգի կազմակերպիչների

կողմից կանոնավոր կերպով դուրս է բերվում երկրից, վերադառնում են միայն մի քանիսը» [16]: Նույն աղբյուրի պնդմամբ, շոշափելի է նաև սեզոնային թրաֆիկինգը: Այսպես, յուրաքանչյուր ամառ Աղրբեջանից Թուրքիա ինքնարիոներով դուրս են բերվում մոտ 500-600 երիտասարդ կանայք և աղջիկներ: Ընդ որում, Բարձի օդանավակայանում յուրաքանչյուր աղջկա համար տրվում է մոտ \$500 կաշառը: Վերջին հանգամանքը ստիպեց կավատությամբ զբաղվող կառույցներին յուրացնել աղջիկների սեզոնային «արտահանման» նոր ուղիներ՝ Նախիջևանի և Վրաստանի վրայով: Նմանատիպ գործունեությունը, այս անգամ՝ դեպի ԱՍԷ, ունի էլ ավելի զանգվածային բնույթ: Այսպես, համաձայն նույն աղբյուրի, ամառային սեզոնին Աղրբեջանից ԱՍԷ ամսական դուրս է բերվում մոտ 1500-1800 աղջիկ: Համաձայն աղբյուրի՝ կավատությամբ զբաղվող կառույցներից Աղրբեջան սեզոնային դրամական մուտքերը կազմում են մոտ \$1 մլն:

\*\*\*

Այսպիսով, բերված տվյալները վկայում են, որ անգամ 2009թ. Աղրբեջանում իրականացված մարդահամարի արդյունքների հրապարակումից հետո, պաշտոնական Բարձի վիճակագրությունը շարունակում է խեղաթյուրել երկրի փաստացի բնակչության մասին տվյալները՝ միզրացիոն հոսքերի ոչ համարժեք դիտարկումով: Պաշտոնական աղբյուրներն իրենց վիճակագրական տվյալներում չեն դիտարկում աշխատանքային միզրանտներին և տասնյակ անգամներ նվազեցնում են Աղրբեջանից գույտ միզրացիայի ծավալները:

Մինչդեռ, այս երկրից միզրանտների թվաքանակի կոնսերվատիվ գնահատականը, հիմնված բանկային փոխանցումների վիճակագրության վրա, կազմում է շուրջ 1.2-1.5 մլն մարդ: Այս գնահատականը կարելի է ընդունել որպես Աղրբեջանից արտերկրում գտնվող միզրանտների նվազագույն գնահատական: ԱՀ-ից դուրս գտնվող հիմքրանտների իրական թիվը մոտենում է 2.0-2.2 մլն մարդու: Ընդ որում, հիմքրացիան ԱՀ-ից շեշտակիորեն աճում է սկսած 2004-ից:

Սակայն, միզրացիոն գործնթացների արհամարիումից զատ, պաշտոնական Բարուն երկրի ժողովրդագրական վիճակագրությունը խեղաթյուրում է նաև այլ կերպ:

### Գլուխ 3.

### Աղբբեջասսական ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃԻ ՏԵՍՊՈ

Աղբբեջանի ընդհանուր բնակչության մասին անցած երեք տարիների համար բերվող ԱՎՊԿ պաշտոնական թվերը՝ 8.922 մլն, 8.998 մլն և 9.111 մլն համապատասխանաբար, վկայում են, որ դրանք շարունակում են նախորդ տարիներին ԱՎՊԿ որդեգրած այսպես կոչված «գծային աճի» միտումը։ Գծային աճի այս «մոդելը» բերանում է արտացոլել երկրությական ժողովրդագրական դինամիկայի պատկերը։

Իրոք, հենվելով 2011թ. պաշտոնական Բարվի տվյալների վրա՝ Նկար 7-ում պատկերել ենք 1965-2011թթ. Աղբբեջանի բնակչության աճի գրաֆիկը։ Բնշպես տեսնում ենք, այն միանգամայն գծային է և 99.85% ճշգրտությամբ ապրոքսիմացվում է պարզունակ գծային։

հավասարումով (նկարում՝ կարմիր գիծ)։ Համեմատելով այսպիսի պատկերը հետխորհրդային հանրապետությունների (Հայաստանի պարագայում տե՛ս և վերը, Նկար 3) բնակչության աճի կորերի հետ՝ դժվար է թոթափել դրա արհեստածին լինելու կասկածները։


Եվ իրոք, բավական է դիտարկել Աղբբեջանի բնակչության տարեկան աճի տեմպերի (%) գրաֆիկը, որը թաքնված է Նկար 7-ի միապահադաշտությամբ։ Այս գրաֆիկը պատկերել ենք Նկար 8-ում, ուր ակնառու է տարեկան աճի տեմպերի միտման խեղաքայուրումը՝ սկսած 1997-98-ից։

Նկար 7. Աղբբեջանական Հանրապետության բնակչության բ-վի աճը։  
1965-2011թթ.։ Պաշտոնական տվյալներ, մլն մարդ




Իսկապես, ի հակադրումն նախորդ վեց տարիների միտման, 1997-2004թթ. ժամանակահատվածում Աղբեջանի բնակչության տարեկան աճն անսպասելիորեն կայունանում է տարեկան 1.0%-ի սահմանում: 2004-05-ից սկսած՝ տարեկան աճն անբացատրելիորեն նկատում է ավելանալ և 2009թ.: հանրապետական մարդահամարի անցկացման տարում, հասնում է 1.62% անհավատալի բարձր արժեքի, որից հետո տեղի է ունենում նույնիսկ ավելի անբացատրելի մի բան: 2010թ. Աղբեջանի բնակչության տարեկան աճը հանկարծակի զահավիժում է ներքին՝ մինչև 0.84% արժեք: Բնակչության տարեկան աճի այս բավական իներցիոն ու բազմամյա ցիկլերի ազդեցությանը ենթակա պարամետրի այսօրինակ վայրիվերումները կարու են բացատրության: Ցավոք, այն բացակայում է թե՝ ԱՎՊԿ պաշտոնական կայրում, թե՝ Աղբեջանի ժողովրդագրական վիճակագրության խնդիրներին նվիրված մեզ հասանելի գրականությունում կամ ԱՀ 2009թ. մարդահամարի մեկնաբանությանը նվիրված հրապարակումներում:

Այս երևույթը ժողովրդագրական պատմական ճշգրիտ հեռանկարում դիտարկելու համար նկատենք, որ համաձայն լուրջ մասնագիտական աղբյուրների, ԽՍՀՄ տարիներին Աղբեջանական ԽՍՀ ժողովրդագրական դինամիկան ապրել է հատկանշական անցում ընտանեկան կացութածելի ասիական (միջինասիական) կերպից ելքոպականի: Այս անցումն ուներ բնութագրական երկու հատկանիշ, հետզհետեւ նվազում



Համաձայն նույն աղյուրի, Աղբեջանի հետխորհրդային վերարտադրողական ժողովրդագրական դինամիկայի նույն փառքը բնորոշ էր առնվազն ևս մեկ տասնամյակ։ Այսպես, Նկար 9-ում արտապատկերել ենք հիշյալ աղյուրի գրաֆիկներից մեկը (տե՛ս [3], բաց. 12 Կոэффициент суммарной рождаемости в Азербайджане, 1960-2009 годы, детей на женщину), որը քաղաքաբնակ, գյուղաբնակ կանաց և ընդհանուր բնակչության համար առանձին-առանձին ցույց է տալիս Ադր.ԽՍՀ և Աղբեջանական Հանրապետության գումարային ծնելիության գործակիցի կորը 1960-2010թթ.։ Ինչպես տեսնում ենք նկարից, 60-ականներին գումարային ծնելիության գործակիցը գյուղաբնակ կանաց համար էականորեն գերազանցում էր քաղաքաբնակների ցուցանիշը։ Այս տարրերությունը կայունորեն նվազում է ողջ 70-80-ական թվականների ընթացքում, ինչն էլ հանդիսանում է եվրոպական ընտանիքի կացութածեին անցման վերը նշված միտումի արդյունքը։ Նկար 9-ում այն արտացոլվում է գյուղաբնակ և քաղաքաբնակ կանաց համար ծնելիության կորերի գուգամիտման մեջ։ 90-ականների կեսերին այս կորերը գրեթե հանդիպում են իրար բնակչության պարզ վերարտադրողունակության շեմային արժեքի (2.1 երեխա մեկ կնոջը) մոտակայքում։ Ըստ որում, 90-ականների սկզբին քաղաքաբնակ կանաց համար գումարային ծնելիության գործակիցը նվազում է մինչև 2.8։ 1996-2003թթ. քաղաքաբնակ կանաց համար այս գործակիցի արժեքը հատում է պարզ վերարտադրողունակության շեմը (2.1 երեխա մեկ


կնոջը) և հասնում 1.6 արժեքի՝ մնալով այս մակարդակին 1998-2002թթ.<sup>1</sup>։ Նույնն է իրավիճակը և գյուղաբնակ կանաց համար, որոնց գումարային ծնելիության գործակիցը նշված ժամանակահատվածում դառնում է շեմային։ Արդյունքում՝ շեմայինից ցածր էր նաև Աղբեջանի ընդհանուր բնակչության գումարային ծնելիության գործակիցը՝ առնվազն 1998-2002թթ. ժամանակահատվածում։



<sup>1</sup> Համաձայն նույն աղյուրի՝ Հայաստանի համար բնակչության գումարային ծնելիության գործակիցը հատել է պարզ վերարտադրողունակության շեմային արժեքը դեռ 1994թ.

Տարօրինակն այն է, որ ծնելիության այս վարքագիծը բոլորովին չի արտացոլվում բնակչության թվաքանակի մասին պաշտոնական Բարվի տվյալներում (տե՛ս Աղյուսակ 1): Ավելին, կարծում ենք, առկա են բոլոր հիմքերը պնդելու, որ բնակչության թվաքանակի և տարեկան աճի տեմպի արհեստական բարձրացմանն ուղղված պաշտոնական Բարվի մեքնայությունները, որոնց հետքերն արտացոլված են ՍԱԿ ԺՏ տեղեկագրերում (տե՛ս վերը), կոչված են բողարկելու այս հանգամանքը: Այլ բան է, որ նման պարզունակ բողարկումը՝ անակնկալ կերպով ավելացնել բնակչության թվաքանակը 0.5 մլն մարդով՝ առանց հարակից ցուցանիշների վերանայման (տե՛ս Աղյուսակ 2 և դրանից ներքի), այսպես ասենք՝ արդյունավետ չէ, քանի որ թերացել է կոծկել նաև ծնելիության հետ կապված իրողությունները:

Ուշագրավ է, որ նման պարզունակ մեքնայությամբ է բացատրվում նաև Աղբյութական բնակչության տարեկան աճի «անբացատրելի» ու անակնկալ զահավիժումը՝ 2009թ. 1.62% արժեքից մինչև 0.84% արժեքը հաջորդ տարի: Դրա համար բավարար է մեկ զրաֆիկում պատկերել բնակչության տարեկան աճի կորերը՝ հիմնված ԱՎՊԿ և ԱՄՆ ԿՀՎ տվյալների վրա (տե՛ս Նկար 10): Այստեղ մեզ հետաքրքիր է ոչ թե այդ տվյալների ակնհայտ տարբերությունը: Թեև նշենք, որ 1997-2004թթ. 1.0%-ի սահմանում բնակչության աճի տեմպի՝ պաշտոնական Բարվի և ՍԱԿ ԺՏ գնահատականներին ԿՀՎ



գնահատականներում համապատասխանում է աճի տեմպի անկում մինչև 0.22-0.27%:

Ուշադրություն դարձնենք մեկ այլ բանի վրա, թե ինչպես է աճում այս գնահատականների տարբերությունը՝ սկսած 2004 թվականից: Այդ տարբերությունն իր առավելագույն արժեքին է հասնում 2009թ.՝ Աղբյութական Հանրապետությունում մարդահամարի անցկացման տարեթվին: Հաջորդ տարի, փորձելով գոնե փոքր-ինչ համապատասխանել միջազգային և այլ կազմակերպությունների՝ մարդահամարից ակնկալվող արդյունքներին և մեղմել բնակչության տարեկան աճի գնահատա-

կաններում առկա աղաղակող տարբերությունը, ԱՎՊԿ փորձագետները հնարավոր համարեցին օգտագործել բնակչության տարեկան աճի ԱՄՆ ԿՀՎ այդ տարվա գնահատականին (0.81%) մոտ ցուցանիշ (0.84%):

Մեր կարծիքով՝ սա բացատրում է Աղրբեջանական Հանրապետությունում 2010թ. բնակչության ամենամյա աճի այլ կերպ չբացատրվող և անսպասելի անկումը: Հասկանալի է, սակայն, որ նման «ճշգրտումն» իրականում ոչինչ չի լուծում և չի շտկում:


Դրա համար բավական է համեմատել ԱՎՊԿ և ԿՀՎ տեղեկատուների տվյալները ծնելիության, մահացության և զուտ միզրացիայի մասին, այսինքն՝ այն գործոնների, որոնք ձևավորում են բնակչության տարեկան աճը: Նկար 11-ում այդ տվյալները բերում ենք ուղիղ թվերով (այլ ոչ թե %-ներով կամ բնակչության 1000 շնչի հաշվով, ինչպես ընդունված է ԱՄՆ ԿՀՎ տեղեկատուներում):

Չխորանալով այդ տվյալների համեմատական վերլուծության մանրամասների մեջ՝ նշենք միայն, որ ահա արդեն 11 տարի պաշտոնական Բարուն շարունակաբար նվազեցնում է բնակչության մահացության<sup>1</sup> և զուտ միզրացիայի տվյալները և ավելացնում


<sup>1</sup> Այսպես, համաձայն Հանաշխարհային բանկի և Զարգացման ասիական բանկի տվյալների՝ 2006թ. դրույթամբ մանուկների մահացության աստիճանն Աղրբեջանում 16 անգամ բարձր էր, քան միջին Եվրոպական ցուցանիշը: Իսկ մայրերի մահացության աստիճանը գերազանցում էր միջին Եվրոպական ցուցանիշը 10 անգամ [17]:

ծնելիության մասին տվյալները<sup>1</sup>: Նման եղբակացության են հանգում նաև մի շարք աղրբեջանցի փորձագետներ [9, 15]:

Եվ սա ի ուղ բոլորը չեն:




<sup>1</sup> ԱՄՆ ԿՀՎ գնահատականն Աղրբեջանում ծնելիության մասին 2000-06թթ. համար, որը գերազանցում է պաշտոնական Բաբեկի գնահատականները, բացատրվում է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի գնահատականների սկզբանական տարերերությամբ և ԱՄՆ Սարդահամարի բյուրոյի օգտագործած մոդելների առանձնահատկություններով: Հիշեցնենք, որ Աղրբեջանից ստացվող տվյալների արժանահավատության նկատմամբ վստահության կրուսաց ստիպեց ԿՀՎ փորձագետներին 2008թ. հրաժարվել ժողովրդագրական գնահատականներ տալ այլ երկրի համար (տե՛ս Աղյուսակ 3):

**ԱՐՐԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ****«ԿԻՐՑՈՒԱ» ԺՈՂՈՎՐԴԱԳՐԻ ԱՌԱՋԱՆԱԿԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ****Գլուխ 4.****ԱՐՐԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ ԸՆՏ ՍԵՐԻ**

Այս զնունական բարվի մեքենայությունները՝ կապված երկրի բնակչության թվաքանակի և նրա տարեկան աճի հետ, կենտրոնանում են նաև բնակչության սեռական կազմի ուղղությամբ: Բավարարելու համար 2007թ. երկրի բարձրագույն իշխանության հրահանգ-պահանջն առ այն, թե «9 միլիոնանց Աղբեջանը երեք չկ հանդուրժի սեփական տարածքների կորուստը» [18], հանրապետության վիճակագրական և այլ մարմինները դիմեցին բնակչության թվաքանակի և աճի տեմպի բարձրացմանն ուղղված տարբեր հնարքների, որոնք կոչված են 2009թ. մարդահամարի նախօրյակին ապահովելու երկրում 9 միլիոն բնակչության առկայության «փաստը»:

Անհրաժեշտ է նշել, որ այս հնարքները մեծ մասամբ կատարվում են պարզունակ ձևով, ինչը հնարավորություն է ընձեռում հայտնաբերել դրանք անզամ մակերեսային վերլուծության ընթացքում: Այդպիսի մի քանի օրինակ դիտարկեցինք վերը: Մի քանիսը, օրինակ՝ Աղրբեջանում հացի արտադրության և սպառման վիճակագրական տվյալները կամ ԱՀ ընտրացուցակներում ընդգրկված մարդկանց թվաքանակը, արդեն դիտարկվել են այլ հրապարակումներում [18]: Նկատենք նաև, որ 9 միլիոններորդ աղրբեջանցու ծնունդի հետ կապված՝ պաշտոնական Բարվի «թատերական շոուի» արհեստական բնույթը չվրիպեց նաև որոշ աղրբեջանական հրապարակումների ուշադրությունից [19]:

Ինչեւ, պաշտոնական Բարուն շարունակում է որդեգրած արատավոր գործելակերպը, և ահա շրջանառության մեջ են դրվում արդեն «աղրբեջանական առաջին բերի-բումի» մասին պնդումները, արդեն խոսվում է «մոտ ապագայի 10 միլիոնանց Աղրբեջանի» մասին [20], որը, պետք է ենթադրել, առավել ևս չի «համակերպվի սեփական տարածքների կորստի հետ»: Բոլոր այս մեքենայությունների համար հասկանալի պատճառով վճռական նշանակություն ունեն բնակչության իզական սեռի թվաքանակի և տարեկան աճի, ինչպես նաև դրա տարիքային կազմի մասին վիճակագրական տվյալները: Ուստի, անդրադառնանը այս հարցում պաշտոնական Բարվի և այլ աղբյուրների տվյալներին:



Աղբյուր՝ UN Demographic Yearbooks [2]

Նկար 12-ում ամփոփել ենք ՄԱԿ ԺՏ տեղեկագրերում բազային (մարդահամարային) տարիների համար Աղրբեջանական Հանրապետության բնակչության սեռական կազմի մասին տվյալները: Հիշեցնենք, որ բազային տարվա, այսինքն՝ նախկինում մոտակա մարդահամարի տարվա, տվյալներն օգտագործվում են ՄԱԿ ԺՏ փորձագետների կողմից սեփական մոդելավորումների և երկրի տվյալ տարվա բնակչության թվաքանակի գնահատման, ինչպես նաև բնակչության թվաքանակի տարեմիջյան գնահատման համար: Ուստի, Նկար 12-ում պատկերված գրաֆիկը, իիստ ասած, դիմամիկ «իմաստ չունի»: Այն իրական ժամանակային


զրաֆիկ չէ: Սակայն ակների է դարձնում Աղբեջանի պաշտոնական վիճակագրության և ՍԱԿ ԺՏ գործելակերպն այս հարցում, և այդ առումով չափազանց խոսուն է:

Իրոք, 1998թ. ՍԱԿ ԺՏ տեղեկագրում որպես բազային են ընդունված դեռ պաշտոնապես չհրապարակված 1999թ. Աղբեջանի մարդահամարի նախնական տվյալները, ինչն էականորեն փոխում է բնակչության բազային սեռական կազմը՝ հիմնված 1989թ. մարդահամարի արդյունքների վրա (48.8% արական - 51.2% իգական համամասնությունից 51.8% արական - 48.2% իգականի): Արդյունքում՝ բնակչության իգական սեռի թվաքանակը թոփշրած աճում է 237 հազարով (3.597 մլն իգական սեռի բնակչությունից՝ 3.834 մլն): Այս նոր համամասնությունը պահպանվում է մինչև 2001թ. ՍԱԿ ԺՏ տեղեկագիրը, ուր 1999թ. մարդահամարի արդյունքների մասնակի հրապարակումից հետո վերականգնվում է բնակչության սեռական կազմի նախկինում ընդունված համամասնությունը՝ 48.8% արական, 51.2% իգական: Այս անգամ նույնպես Աղբեջանի իգական սեռի բնակչությունը թոփշրած աճել է՝ և 236 հազարով: Ու այս ամենը՝ առանց ՍԱԿ ԺՏ փորձագետների որևէ բացատրության կամ մեկնաբանության: Դժվար չէ կոահել ամենայն հավանականությամբ պաշտոնական Բաքվի թելադրանքով կատարված այս մեքնայությունների իմաստը. ապահովել բավարար «Վերաբարտարողական բազա», որն իր հերթին կիմնավորի Աղբեջանական Հանրապետության բնակչության տարեկան աճի

Աղբեջանական Հանրապետություն,  
«Կիրտօն» ժողովրդագրության սկզբանական հաջողություն

բավարար տեմպ, որպեսզի թիզ թէ շատ հիմնավոր կերպով նյութականանա հայր և որդի Ալիևների «9 միլիոնանց Աղբեջանի» պատրանքը:

Բայց, ի վերջո, ցանկացած երկրի բնակչության թիվը կազմվում է դրա արական և իգական սեռի բնակչության թվի պարզ թվաբանական գումարով: Եվ դժվար է անընդհատ արհետականորեն բարձրացնել միայն իգական սեռի բնակչության թիվը՝ առանց ընդհանուր պատկերի աղավաղման: Հաջողվէ լ է




Աղբյուր՝ [http://www.azstat.org/statinfo/demoqgraphic/en/AP\\_AP\\_1.shtml](http://www.azstat.org/statinfo/demoqgraphic/en/AP_AP_1.shtml)

<sup>1</sup>Հուսով եմ, այս իրադրությունը կպահպանվի դեռ որոշ ժամանակ:

արդյոք կոծկել բնակչության սեռական կազմի առումով կատարված այս մերենայությունների հետքը:

Կարծում ենք՝ Եթե Նկար 12-ում բերված պատկերը բավարար չէ, կարելի է անդրադառնալ նաև ԱՎՊԿ-ի կողմից այսօր (2011թ. դեկտեմբերին) բերվող տվյալների զննմանը:

Այսպես, հիմնվելով Աղբեջանական Հանրապետության պետական վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալների վրա (ներբեռնված տվյալների աղյուսակը տե՛ս Հավելված 2-ում), Նկար 13-ում պատկերել ենք երկրի իզական սեռի բնակչության տվյալները՝ սկսած 1959-ից: Այստեղ նկատելի է, որ 1999թ. մարդահամարի տվյալները խիստ տարբերվում են նախորդ տասնամյակում ընթացող միտումներից: Ի դեպ, դրանք պետք է որ շատ մտահոգիչ լինեին աղբեջանական իշխանությունների համար, քանի որ վկայում էին իզական սեռի բնակչության բարձրատեմպ կրծատման մասին: Համաձայն հեղինակավոր մի շարք կազմակերպությունների (UNISEF, WB, WHO), այս երևույթը բնորոշ է «ասիական, մահմեդական սոցիալական» մոդելով անցումային տնտեսությամբ զարգացող երկրներին և պայմանավորված է մարդկային սաղմի սեռի որոշման հասանելի և ճշգրիտ մեթոդների տարածումով: Նման հնարավորություններն ուժինացնում են այդ հասարակություններում առկա իզական սեռի սաղմի հեռացման հասարակական միտումը (այսպես կոչված «անցանկալի աղջիկ երեխա» ֆենոմենը): Նշված կազմակերպությունների, ինչպես նաև որոշ աղբեջանական ոչ պետական կազմակերպությունների



ճնշմամբ այս խնդիրը սկսել է լուսաբանվել նոյնիսկ աղբեջանական մամուլում [21] (տե՛ս նաև [22]):

1999թ. մարդահամարի պաշտոնական տվյալները հարմարուեն «լուծում» են այս խնդիրը բնակչության իզական հատվածի թվաքանակի հանկարծակի բարձրացումով՝ «ձեռքի հետ» լուծելով նաև 9 միլիոնանոց ԱՀ ունենալու «կենսաբանական հիմնավորման» խնդիրը:

Որպեսզի առավել ցայտուն դառնա պաշտոնական Բարվի բերված այս տվյալների արհեստածին լինելը, բավական է կառուցել բնակչության արական և իզական հատվածների տարեկան աճի գրաֆիկն անվանական միավորներով, ինչն արել

Ենք Նկար 14-ում: Ընդգծենք, որ հիմնվում ենք պաշտոնական այն նույն տվյալների վրա (տե՛ս Հավելված 2), որն օգտագործել ենք Նկար 13-ում: Ուղղակի այստեղ դիտարկված է 1960-2011թթ. ժամանակահատվածը և պատկերված է բնակչության արական և իզական հատվածների թվաքանակի աճը (հազ. մարդ) նախորդ տարվա համեմատ:

Բնշպես տեսնում ենք նկարից, համաձայն Աղրբեջանական Հանրապետության պետական վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալների, 1999թ.՝ նորանկախ Աղրբեջանական Հանրապետության առաջին մարդահամարի անցկացման տարում, երկրի իզական բնակչությունը նախորդ տարվա համեմատ աճել է 76.8 հազարով, իսկ ԱՀ արական սեռի բնակչությունն ընդհանրապես չի աճել և նույնիսկ կրծատվել է 100 մարդով:

Կարծում ենք՝ մեկնաբանություններն ավելյորդ են:

## Գլուխ 5

ԱԴՐԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԲԱԿՉՈԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԸ

Աղբեջանական Հանրապետության մարդահամարի պաշտոնական տվյալները բնակչության ազգային կազմի մասին բերվում են ԱՎՊԿ ինտերնետ-կայքի 1.5 և 1.6 բաժիններում: Աղյուսակ 6-ում մենք ամփոփում ենք այդ տվյալները: Դրանք չեն կարող չգարմացնել:

Նախ, զարմացնում են հայերի մասին պաշտոնական տվյալները՝ 120 հազար 2009թ.: Մի կողմ թողնենք այն հանգամանքը, որ դա պարզապես 1999թ. Լեռնային Ղարաբաղի մարդահամարի տվյալների կրկնությունն է<sup>1</sup>: Զարմացնում է այն, որ համաձայն ԱՎՊԿ տվյալների, հայերի այդ քվաքանակի միայն

<sup>1</sup> ԱՅՆԱՀԻՆ Դարաբաղի ժողովրդագրական ցուցանիշների մասին տե՛ս [23]:

0.2%-ն է տիրապետել աղբքեցաներենին, 0.1%-ը՝ ոռւսերենին և 0.0%-ը՝ անգլերենին: Մինչդեռ, 2009թ. աղբքեցաներենին տիրապետել է Աղբքեցանական Հանրապետությունում ապրող վրացիների 79.5%-ը, ոռւսերենին՝ 21.4%-ը և անգլերենին՝ 0.5%-ը: Սա կարելի էր զվարձալի համարել, եթե դրա տակ թարնված չինեին բոլորովին ոչ զվարձալի իրողություններ:

**Աղյուսակ 6. Աղբքեցանական Հանրապետության բնակչության ազգային կազմը՝ իւստ 2009թ. մարդահամարի արդյունքների**

Ազգություններ	Թիվը (հազ. մարդ) և %-ը ընդհանուր բնակչության մեջ	Մարդկանց %-ը, որոնք ազատորեն տիրապետում են			
		Իրենց մայրենին	Աղբքեցանական մայրենին	Ոռուսերենին	Անգլերենին
Աղբքեցանական	8172.8	91.60%	99.9	-	6.7
Լեզգիներ	180.3	2.02%	91.7	96.3	23.7
Ռուսներ	119.3	1.34%	99.2	42.9	-
Հայեր	120.3	1.35%	99.9	0.2	0.1
Թաթշիներ	112.0	1.26%	43.0	99.8	5.9
Ավարներ	49.8	0.56%	94.1	99.4	18.1
Թյուրքեր	38.0	0.43%	85.5	99.7	11.0
Թթարքներ	25.9	0.29%	93.6	22.7	12.1
Թթթեր	25.2	0.28%	76.5	99.8	9.0
Ուկրաինացիներ	21.5	0.24%	97.7	5.6	3.7
Սախուներ	12.3	0.14%	96.2	99.2	9.9
Վրացիներ	9.9	0.11%	98.0	79.5	21.4
Հրեաներ	9.1	0.10%	94.1	45.6	19.3
Քրդեր	6.1	0.07%	51.9	99.9	6.4
Կովկասներ	4.4	0.05%	28.9	100.0	8.5
Ուղիներ	3.8	0.04%	99.3	99.6	60.9
Խիալուցներ	2.2	0.02%	97.5	99.9	0.9
Այլ	9.5	0.11%	82.9	62.4	20.0
Ընդհանուրը	8922.4	100%	98.8	98.6	7.6
Աղյուսակ 1.6. Əhalinin ana dili və sərvət danişdiyi dilə görə bölgüsü.					
<a href="http://www.azstat.org/statinfo/demographic/az/AP_AZ_1.shtml">http://www.azstat.org/statinfo/demographic/az/AP_AZ_1.shtml</a>					

#### Աղբքեցանական ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅԱՆ

#### «ՎԻՐՏՈՒԱ» ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՊԱԽՉԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այսպես, ԱՎՊԿ պաշտոնական տվյալներով՝ Լեռնային Ղարաբաղում ապրում է 731.6 հազ. աղբքեցանցի և քուրդ, ինչպես նաև 120 հազ. հայ [18]: Ընդ որում, Լեռնային Ղարաբաղում իբր թե բնակչող 731.6 հազ. աղբքեցանցիները և քրդերը պաշտոնական Բարվի կողմից հաշվառվում են երկու անգամ. նախ՝ իբրև տվյալ տարածքի բնակչություն, և հետո՝ իբրև «քոնի տեղահանվածներ», խնամքով նշելով դրանց թիվը ՄԱԿ Փախստականների հարցերով գործակալության (UNHCR) համապատասխան տեղեկագրերում:<sup>1</sup> Սեփական խեղաթյուրումներից խճճված ԱՎՊԿ-ն ղարաբաղյան նախկին Զերրախի շրջանի համար 1990-99թթ. ժամանակահատվածում ֆիքսում է աղբքեցանցի և քուրդ բնակչության 42% աճ՝ 70.3 հազ.: Քարվաճառի համար 2000-05թթ. արձանագրված է բնակչության 75% աճ, իսկ 2000-09թթ. համար՝ աճ նույնիսկ 2.7 անգամ: Մինչդեռ այդ շրջաններում 90-ականների կեսից աղբքեցանցի կամ քուրդ բնակչությունն ընդհանրապես բացակայում է:

Արսուրդային այս իրավիճակը մասամբ գիտակցվում է նույնիսկ որոշ աղբքեցանցի վերլուծաբանների կողմից: Այսպես, աղբքեցանական մի փորձագետի խոսքերով՝ «После начала карабахского конфликта и последовавших кровавых событий численность армян в Азербайджане резко сократилась, и ныне они проживают в основном в Нагорном Карабахе. Правда, долгое время

<sup>1</sup> <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/page?page=49e48d1e6>

официальные власти Азербайджана сообщали, что вне территории Нагорного Карабаха в республике проживает от 30 до 40 тысяч армян. Что же показала перепись 1999 года? Оказывается, ныне в Азербайджане проживает 120.7 тысячи армян! Однако внимательное изучение статистических данных переписи по районам показывает, что речь идет практически об армянах, живущих в Нагорном Карабахе ... Трагикомизм данных переписи об армянах заключается в том, что с одной стороны указывается, что 35.5 тысячи или 29.4% армян - это дети в возрасте до 14 лет, с другой тут же отмечается, что средний возраст армян республики равен 57 годам!» [4]:

Պաշտոնական Բարվի վիճակագրությունում զարմացնում է մեկ այլ բան ևս: Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 6-ում, թալիշների թվաքանակի պաշտոնական գնահատականն ըստ 2009թ. ապրիլյան մարդահամարի տվյալների՝ կազմում է 112 հազ. մարդ կամ հանրապետության բնակչության ընդհանուր թվի մոտ 1.3%-ը: Մինչդեռ, համաձայն կոնսերվատիվ գնահատականների, թալիշների թվաքանակը ԱՀ-ում կազմել է մոտ 0.8-1.0 մլն մարդ դեռ 1996թ. [24]: Ընդունելով ԱՀ-ում 1996թ. թալիշների թվաքանակի 0.8 մլն մարդ զգուշավոր գնահատականը և կիրառելով հանրապետության բնակչության աճի ամենամյա տեմպի մասին միջինացված պաշտոնական տվյալները՝ կստանանք, որ 2011թ. թալիշները հանրապետությունում կազմել են 1.04 մլն մարդ, այսինքն՝ Ադրբեյչանական Հանրապետությունում 2011թ. բնակչության

պաշտոնական թվի մոտ 11%-ը: Կամ՝ մոտ 12.4%-ը, եթե ընդունելու լինենք այդ տարվա համար ԱՄՆ ԿՀՎ գնահատականը [26]: Ինչպես տեսնում ենք, այս գնահատականները 10 անգամ գերազանցում են պաշտոնական տվյալները: Նշենք, որ ըստ որոշ անկախ փորձագետների, թալիշների ներկայիս թիվն ԱՀ-ում նույնիսկ ավելին է և կազմում է բնակչության ընդհանուր թվի 20-25%-ը [25]:


Պարզ պատկերացնելու համար պաշտոնական Բարվի գործելակերպը երկրի բնակչության ազգային կազմի վիճակագրական տվյալների հարցում և ԱՀ ու Ադր.ԽՍՀ վարած ազգային քաղաքականության առանձնահատկությունները՝ հարկ է հիշեցնել, որ այնպիսի ազգեր և ազգություններ, ինչպիսիք են թաթերը, օսերը, ասորիները, ջեկերը, գնչուները, լաքերը, եզրիները, լատգալները, մարիները և այլք, սկսած 1926 թվականից՝ երկար ժամանակով անհետանում են Բարվի պաշտոնական վիճակագրական տվյալներից: Դե, իսկ թալիշների, քրդերի, խինալուգների, հայերի, ուղիների, ուսւների, հրեաների և այլոց ժողովրդագրությունը բավական պերճախոս վայրիվերումներ ունի, ընդ որում՝ ԽՍՀՄ փլուզումից և տարածաշրջանային դիմակայությունն սկսվելուց դեռ շատ առաջ [26, 36]:

Այսպես, ԽՍՀՄ բնակչության 1926թ. դեկտեմբերի 17-ի՝ «ամենադեմոկրատական և մանրակրկիտորեն նախապատրաստված մարդահամարի տվյալներով, որի կազմակերպիչներն ու դեկավարներն էին խոշոր վիճակագիր-գիտնականներ Օ.Ա.Կվիտկինը, Վ.Գ.Միխայլովսկին և ուրիշները» [27, 28],

Աղբբեջանական ԽՍՀ ազգային կազմը ներառում էր 93 ազգ և ազգություն (տե՛ս Նկար 15): Ընդ որում, ինչպես հայտնի է, Աղբ.ԽՍՀ (որն այն ժամանակ մտնում էր Անդրկովկասյան խորհրդային դաշնային սոցիալիստական հանրապետության մեջ) տիտղոսակիր ազգերը կովկասյան թաթարներն էին («թյուրքեր») և հայերը: 1926թ. մարդահամարի արդյունքների համաձայն՝ «թյուրքեր» կազմում էին Աղբ.ԽՍՀ բնակչության ընդհանուր թվի 63.3%-ը (1.185 մլն մարդ [29, տոմ 14, ս. 11-13]):<sup>1</sup> Իսկ Աղբբեջանական Հանրապետության 2009թ. ապրիլյան մարդահամարի պաշտոնական կայքում բերված տվյալներն առանձնացնում են ընդամենը 17 ազգ և ազգություն, ընդ որում՝ «աղբբեջանցիները» կազմում են արդեն 8.17 մլն, այսինքն՝ ընդհանուր բնակչության 91.6%-ը (տե՛ս Աղյուսակ 6 և Նկար 16):

Հանրապետության բնակչության բոնի «թյուրքացման» քաղաքականության արդյունքները և պաշտոնական Բարվի «ազգային հարցով» վիճակագրական խեղաթյուրումներն առավել պատկերավոր կլինեն, եթե մեկ գծապատկերում բերվեն Աղբ.ԽՍՀ և Աղբբեջանական Հանրապետության բնակչության բոլոր մարդահամարների պաշտոնական արդյունքները՝ սկսած

Նկար 15. Աղ.ԽՍՀ բնակչության ազգային կազմը՝ ըստ 1926թ. ԽՍՀՄ մարդահամարի



Աղյուսակ՝ [29]

1926թ. առայսօր, ինչն արել ենք Նկար. 17-ում ներկայացնելով ԽՍՀՄ բոլոր պաշտոնական մարդահամարների տվյալները և ավելացնելով Աղբբեջանական Հանրապետության 1999 և 2009թթ. մարդահամարների պաշտոնական տվյալները:

Ինչպես տեսնում ենք այդ նկարում, հետպատերազմյան ողջ շրջանում հետևողականորեն և անշեղորեն ավելացվում է «աղբբեջանցիների» թիվը Աղբ.ԽՍՀ բնակչության կազմում: 1959թ. պաշտոնական տվյալների համաձայն, այն կազմել է հանրապետության բնակչության ընդհանուր թվի 67%-ը, իսկ ԽՍՀՄ գոյության վերջում՝ 1989թ. մարդահամարի տվյալներով,

<sup>1</sup> «Աղբբեջանցի» անվանումը 1926թ. մարդահամարի նյութերում, բնականաբար, չի կիրառվում: Փակագծերում նշենք, որ 1926թ. մարդահամարն առանձնացնում էր «վորացիներին»՝ «աջարներից», «մենգրեներից», «լազերից», «սվաններից» և «արխազներից» (ազգությունների համարները ցանկով՝ 105-110, [29]): Իսկ «հեմշինները» նշվում են որպես «հայեր» և հաջորդում են միջյանց (147-148 համարները):


«աղբեջանցիների» բաժինն արդեն 83% էր: Նույն ժամանակահատվածում հայ բնակչության բաժինը նվազում է կրկնակի՝ 1959թ. 12%-ի փոխարեն կազմելով 6%՝ 1989թ.:

Հասկանալի է՝ «հայկական հատվածը» Ադր.ԽՍՀ և Աղբեջանական Հանրապետության բնակչության միակ հատվածը չէ, որի հաշվին տասնամյակներ շարունակ իրականացվել է հանրապետության բնակչության «թյուրքացման» քաղաքականությունը<sup>1</sup>: Այս առումով հատկանշական է Ադր.ԽՍՀ և Աղբեջանական Հանրապետության թալիշների մասին պաշտոնական տվյալների պատմությունը [26]:

Այսպես, ԽՍՀՄ 1926թ. մարդահամարի տվյալների համաձայն, Ադր.ԽՍՀ-ում ապրում էր 77.3 հազ. թալիշ [29, տոմ 14, ս. 11-13]: 1937թ. մարդահամարի տվյալներով (որոնք զաղտնի էին պահվել անձամբ Ստալինի ցուցումով [27]), Ադր.ԽՍՀ-ում ապրում էր 99.2 հազ. թալիշ: Երկու տարի անց, համաձայն ԽՍՀՄ 1939թ. մարդահամարի տվյալների, թալիշների թիվն Ադր.ԽՍՀ-ում նվազում է մինչև 87.5 հազար [30]: 1959թ. Ադր.ԽՍՀ-ում ապրում էր ընդամենը 85 թալիշ, հենց այդպես՝ 85 հոգի [31]: ԽՍՀՄ բնակչության 1970 և 1979թթ. մարդահամարների

պորբեսական հաւաքաթություն,  
«ԿիրՏՈՒԱ» ժողովրդագրության պուստակատկությունները

**Նկար 16. Աղբեջանական Հանրապետության բնակչության ազգային կազմը՝ ըստ 2009թ. մարդահամարի**



արդյունքներում թալիշները, որպես Ադր.ԽՍՀ ազգային կազմի բաղկացուցիչ, ընդհանրապես չեն նշվում [32, 33]: Նրանք կրկին, «անսպասելիորեն» ի հայտ են զալիս միայն խորհրդային դարաշրջանի վերջին՝ զորբաշովյան «զլասնոստի» ժամանակ՝ Ադր.ԽՍՀ 1989թ. մարդահամարի տվյալներում (21.2 հազ.) [34]: Իսկ 2009թ., ինչպես նշեցինք վերը, Աղբեջանական Հանրապետությունում ապրող թալիշների պաշտոնական թիվը կազմել է 112 հազ. մարդ, այսինքն՝ մի փոքր ավելի, քան 1937թ.:

Համաձայն ԽՍՀՄ 1926թ. մարդահամարի տվյալների, Ադր.ԽՍՀ-ում ապրում էր 28 հազ. թաթ: 13 տարի անց Ադր.ԽՍՀ-ում ապրող թաթերի պաշտոնական թիվը հավասար է զրոյի [30]:


<sup>1</sup> Նմանատիպ, իսկ որոշ առումներով՝ նույնիսկ ավելի ընդգծված գործելակերա կարելի է տեսնել Վրաստանի բոլոր հանրապետությունների պարագայում, դեռ անցած դարի 10-20 թվականներից վարդող թվին «Վրացականացման» (պետական) քաղաքականությունում և ազգային վիճակագրության տվյալներում:

Թաթերը կրկին հայտնվում էն 1959թ. մարդահամարի պաշտոնական տվյալներում (5.8 հազ.) [31]: 1989-1999թթ. նրանց թիվը գրեթե չի փոխվում և կազմում է մոտ 10 հազ. մարդ: Եվ միայն համաձայն 2009թ. մարդահամարի՝ նրանց թիվը հասնում է 25.2 հազարի:

Նույն է նաև Շահդաղի ժողովուրդների (ջեկեր, բուդուղներ, խապուտիներ, խինալուգներ, կոփզներ) ճակատագիրը: Ինչպես արդարացիորեն նշում է Աշխարհի ժողովուրդների հանրագիտարանը, «Շահդաղի խմբի ժողովուրդների թվաքանակը կարելի է նշել միայն գնահատարար, քանի որ Աղրբեջանի պաշտոնական իշխանությունները նրանց դիտարկում և հաշվառում են որպես «աղրբեջանցիներ» [35]:

Աղր.ԽՍՀ և ԱՀ քաղաքական ղեկավարության վարած բոնի «թրացման» և «աղրբեջանականացման» պետական քաղաքականությունը, որն արդեն գրեթե մեկդարյա պատմություն ունի, շարունակվում է նաև այսօր, իշխանության ամենաբարձր մակարդակներից մինչև առօրեականը (տե՛ս ս, օրինակ [36]):

Այսպես, դեռ 2000թ. ԱՀ նախկին նախագահ Ա.Էլշիբեյը, հրապուրված մեծ թվերի կախարդանքով, հայտարարել էր, որ «40 մլն աղրբեջանցի թուրքերը պետք է միավորվեն Անատոլիայի 70 մլն թուրքերի հետ և ստեղծեն 110 մլն բնակչությամբ մի հզոր երկիր, տարածաշրջանային մի հսկա, որի հետ հաշվի կնստի ողջ աշխարհը» ([37], ցիտում ենք ըստ [36, ս. 8]): Այստեղ, պարզունակ թվաբանական գործողությունների ոյուրինությամբ տարված պրն



Աղբյուրները՝ [26, 29-34]:

Էլիբեյը ոչ միայն ձեռքի հետ «թյուրքացրեց» Իրանի հյուսիսում բնակվող թրախոս իրանական ժողովուրդներին, այլև ողջ Աղրբեջանի բնակչությունը՝ բոլոր այն 93 ազգերին և ազգություններին, որոնք ապրում էին այստեղ դեռ 1926թ.:


Բայց այսպիսի արտառոց՝ «գեմոգրաֆիական թվաքանությունը» հարցի միայն մեկ կողմն է: Թերևս, ավելի վտանգավոր է այս տեսլականի աշխարհաքաղաքական հետևանքը. չէ՞ որ այն անմիջական, ուղիղ և լրջագույն սպառնալիք է Իրանի Իսլամական

Թաթերը կրկին հայտնվում էն 1959թ. մարդահամարի պաշտոնական տվյալներում (5.8 հազ.) [31]: 1989-1999թթ. նրանց թիվը գրեթե չի փոխվում և կազմում է մոտ 10 հազ. մարդ: Եվ միայն համաձայն 2009թ. մարդահամարի՝ նրանց թիվը հասնում է 25.2 հազարի:

Նույն է նաև Շահդադի ժողովուրդների (Չեկեր, բուղուղներ, խապուտիներ, խինալուգներ, կոփզներ) ճակատագիրը: Ինչպես արդարացիորեն նշում է Աշխարհի ժողովուրդների հանրագիտարանը, «Շահդադի խմբի ժողովուրդների թվաքանակը կարելի է նշել միայն զնահատարար, քանի որ Աղրբեջանի պաշտոնական իշխանությունները նրանց դիտարկում և հաշվառում են որպես «աղրբեջանցիներ» [35]:

Աղր.ԽՍՀ և ԱՀ քաղաքական դեկավարության վարած բոնի «թրքացման» և «աղրբեջանականացման» պետական քաղաքականությունը, որն արդեն գրեթե մեկդարյա պատմություն ունի, շարունակվում է նաև այսօր, իշխանության ամենաբարձր մակարդակներից մինչև առօրեականը (տե՛ս, օրինակ [36]):

Այսպես, դեռ 2000թ. ԱՀ նախկին նախագահ Ս.Էլշիբեյը, իրապուրված մեծ թվերի կախարդանքով, հայտարարել էր, որ «40 մլն աղրբեջանցի թուրքերը պետք է միավորվեն Անատոլիայի 70 մլն թուրքերի հետ և ստեղծեն 110 մլն բնակչությամբ մի հզոր երկիր, տարածաշրջանային մի հսկա, որի հետ հաշվի կնստի ողջ աշխարհը» ([37], ցիտում ենք ըստ [36, ս. 8]): Այստեղ, պարզունակ թվաքանական գործողությունների դյուրինությամբ տարված պըն



Աղբյուրները՝ [26, 29-34]:

Էլիբեյը ոչ միայն ձեռքի հետ «թյուրքացրեց» Իրանի հյուսիսում բնակվող թրքախոս իրանական ժողովուրդներին, այլև ողջ Աղրբեջանի բնակչությունը՝ բոլոր այն 93 ազգերին և ազգություններին, որոնք ապրում էին այստեղ դեռ 1926թ.:

Բայց այսպիսի արտառոց՝ «գեմոզրաֆիական թվաքանությունը» հարցի միայն մեկ կողմն է: Թերևս, ավելի վտանգավոր է այս տեսլականի աշխարհաքաղաքական հետևանքը. չէ՞ որ այն անմիջական, ուղիղ և լրջագույն սպառնալիք է Իրանի Իսլամական



Նկար 18. ԲԹՋ նավթամուղի մեկնարկի պաշտոնական արարողությունը, 2006թ.

Հանրապետության, Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և տարածաշրջանի այլ երկրների համար: Իսկ թե ինչպես է կյանքի կոչվում այս տեսլականը, դրա համար բավական է միայն նայել Բաքու-Թբիլիսի-Ջերման (ԲԹՋ) նավթամուղի պաշտոնական բացման արարողության (2006թ.) ժամանակ օգտագործված քարտեզ-պաստառին (տե՛ս Նկար 18): Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է այստեղ պատկերված

Աղբթեզանական Հանրապետությունը: Խախտելով տարածաշրջանային աշխարհագրական և քաղաքական իրողությունները, այն կտրում է Հայաստանը՝ Իրանից, իսկ ԱՀ-ն միացնում է Նախշեանին և Թուրքիային՝ շրջափակելով փոքրացած և դեֆորմացված Հայաստանի Հանրապետությունը: Ահա սա է վերը նշված «դեմոգրաֆիական թվաբանության» աշխարհաքաղաքական իմաստը՝ արտացոլված տարածաշրջանի էներգակիրների տեղափոխման ենթակառուցվածքներում և ամրագրված այսպես կոչված «Ալիսի դրամինի» հիմունքներում [38]:

Այսօրինակ «դեմոգրաֆիական թվաբանությունն» ունի նաև այլ կողմ: Վերջերս, ԱՀ Միլի մեջլիսի մշակույթի կոմիտեի նախագահ, պրոֆ. Ն.Զաֆարովի ջանքերով ԱՀ իշխանական մարմիններում ակտիվորեն քննարկվում է Աղբթեզանի քաղաքացիների ազգանունների զանգվածային և ստիպողական փոփոխման ծրագիրը՝ նոր տիպի անձնագրերի տրամադրման գործընթացի շրջանակներում [39]: *1news.az* գործակալությանը տված հարցագրույցում այս պրոֆեսորը (ցավոք, չեմ կարող այստեղ չակերտներ օգտագործել) պնդել է. «Յուրաքանչյուր ոք, ով իրեն աղբթեզանցի է համարում, պետք է փոխի իր ազգանունը»: Ըստ պրոֆեսորի, իսկական աղբթեզանցու համար այլս անընդունելի են, օրինակ, ազգանունների «ով», «և» վերջավորությունները: Աղբթեզանում տիրող ազգայնականության յուրահատուկ մթնոլորտը լավ է նկարագրում այն հանգամանքը, որ, համաձայն նույն աղբյուրի, Միլի մեջլիսի գործընկերները, մի փոքր կշտամբելով պրոֆ.

Ն.Զաֆարովի առավել կտրուկ հայտարարությունները, ընդհանուր առմամբ կիսում են նրա մոտեցումները, բայց միայն նորածինների և չափահասների պարագայում: Այսինքն՝ ծննդյան վկայականների և նոր անձնագրերի հանձնման պարագայում: Սա հենց այն դեպքն է, որ թվացյալ «մեղմ» հանդիմանանքն ավելի արգահատելի է, անբարոյական ու անընդունելի, քան բուն պնդումը:

Ուստի, զարմանալի չէ, որ ամեն օր առերեսվելով նման իրողությունների հետ՝ Աղրբեջանական Հանրապետության բնիկ ժողովուրդների հասարակական կազմակերպությունները և առաջնորդները 2011թ. դեկտեմբերի 10-ին հանդես եկան հատուկ հայտարարությունով [40]՝ դատապարտելով թե՝ պաշտոնական Բարվի վարած բոնի «աղրբեջանականացման» քաղաքականությունը, թե՝ Աղրբեջանում սանձազերծված հայտյացության ու այլատյացության մթնոլորտը և թե՝ Հայաստանի նկատմամբ պաշտոնական Բարվի ռազմաշունչ հոետորաբանությունն ու նկրտումները:

Այս հայտարարությունը մեծ հնչեղություն ստացավ աղրբեջանական հասարակությունում, սակայն պաշտոնական անդրադարձը, թերևս, տարօրինակ էր: Այս առնչությամբ Աղրբեջանի Դիվանագիտական ակադեմիայի 2011թ. դեկտեմբերյան հանդեսում տիրահոչակ Փոլ Գոբլը հանդես եկավ կարճ հոդվածով, ուր, սակայն, ոչ թե դատապարտում էր աղրբեջանական հասարակությունում տիրող ազգային այլատյացության մթնոլորտը, այլ

հայերին, որոնք, ըստ Գոբլի, թալիշական քարտն «օգտագործում են իրենց նպատակների համար» [41]:

Այսու, որ պարոն Գոբլն իր հոդվածում շանդրադավ նաև ԱՀ Միլի մեջլիսի անդամ, պրոֆ. Ն.Զաֆարովի և նրա քազում նախորդների և հետնորդների նշված գործունեությանը՝ մասնավորապես, և երկրում վարվող բոնի «աղրբեջանականացման» պետական քաղաքականությանն ու դրա հետևանքներին՝ առհասարակ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, հարկ է փաստել, որ բնակչության 2009թ. ապրիլյան մարդահամարը չհանգեցրեց Աղբքեջանական Հանրապետության բնակչության մասին վիճակագրական տվյալների հետ կապված իրավիճակի առողջացմանը: Ինչպես որ դա եղավ 2001-03թթ. Հայաստանի Հանրապետությունում:

Աղբեջանական Հանրապետության պաշտոնական աղբյուր-ները շարունակում են չտարբերակել երկրի *de facto* և *de jure* բնակչությունը, հետևողականորեն խեղաքյուրում են միզրացիոն հոսքերի պատկերը, մահացությունների և ծնելիության վիճակագրությունը: Աղբեջանական Հանրապետության բնակչության պաշտոնական թվաքանակը 2.0-2.2 մլն մարդով գերազանցում է երկրի իրական, *de facto* բնակչության թիվը: 2011թ. այն կազմել է 6.9-7.1 մլն մարդ:

Սկսած 1996-97թթ.՝ պաշտոնական վիճակագրությունը խեղաթյուրում է Աղբքաջանի բնակչության աճի տարեկան տեմպի մասին տվյալները՝ արհետականորեն ավելացնելով այն՝ Կոպիտ կերպով խեղաթյուրվում են նաև ԱՀ բնակչության սեռական կազմի մասին պաշտոնական տվյալները:

Վերջապէս, հավատարիմ մնալով Խորհրդային Ադրբեջանի վիճակագրության «փառահեղ» ավանդույթներին՝ պաշտոնական Բաքուն տասնամյակներ շարունակ և ընդհուպ մինչև այսօր հետևողականորեն խեղաթյուրում է բնակչության ազգային կազմի մասին տվյալները:

Կարծում ենք՝ կան բոլոր հիմքերը պնդելու, որ նման վարքագիծն «Ալիսի դոկտրինի» արտացոլումն է երկրի ժողովրդագրական վիճակագրության մեջ, ինչը կոչված է «ապացուցելու» այդ դոկտրինի բարերար ազդեցությունը երկրի կյանքի և զարգացման վրա:

Ժողովրդագրական վիճակագրությունում պաշտոնական Բարձրի մեքենայություններն առանձին դեպքերում կրկնվում են միջազգային որոշ կազմակերպությունների կողմից: ՄԱԿ ժողովագայում այս մեքենայությունները յուրօրինակ կերպով «վավերացվում» են ՄԱԿ ժողովրդագրական տեղեկագրերում, ինչպես նաև լայնորեն տարածվում են էլեկտրոնային և այլ լրատվամիջոցների օգնությամբ: Նման գործելակերպը ոչ միայն հակասում է ՄԱԿ գործունեության բարձր առաքելությանը, այլև չի նպաստում տարածաշրջանում խաղաղության ու բարորության հաստատմանը:

## Աղբյուրներ և գրականություն

1. US CIA. World FactBooks. 2000 - 2010.
  2. UN Demographic Yearbooks. 1992 – 2010.
  3. Демоскоп Weekly. Институт демографии Государственного Университета – Высшей школы экономики, № 451-452, 24 января – 6 февраля, 2011.
  4. Юнусов А., Этнический состав Азербайджана (по переписи 1999 года), Институт этнологии и антропологии РАН, 2001.
  5. Marjanyan A.H., Key Source Inventory of Greenhouse Gas Emission: Waste Sector: Methane Emissions from Solid Waste Disposal Sites. Vol. 2, Key Sources GHG Inventory of Armenia: Methane Emissions from SWDSs for the Years 1979-2005. Yerevan, 2005.
  6. Statistical Yearbook of Armenia - 2003. Republic of Armenia, Yerevan, 2003.
  7. Migration in the Republic of Azerbaijan: A Country Profile. International Organization of Migration, October 2008.
  8. Миграция и денежные переводы: Цифры и факты – 2011. Отдел Всемирного Банка по Оценке Перспектив Развития, Изд. 2-е, США, Вашингтон, 2011.
  9. Aliyev, Alovsat, «Migration to and from Azerbaijan». - *Migration Perspectives*, 2006, p. 27.
  10. «Эхо», 15 марта 2006г.; «Новое время», 16 января и 13 июля 2007г.; Азербайджанцы мира. Под ред. Р.Э. Мехтиева, т. 1, Баку, 2006, с. 4-5.
  11. Юнусов А., Миграционные тренды и тенденции в постсоветском Азербайджане. В. кн. Транзитная миграция и транзитные страны: теория, практика и политика регулирования. Под ред. И.Молодиковой и Ф.Дювеля, М., Университетская книга, 2009.
  12. <http://www.perepis2002.ru/content.html?id=11&docid=10715289081464>

13. Политика иммиграции и натурализации в России: состояние дел и направление развития. Аналитический доклад. Под ред. С.Н. Градировского, М., 2005.
  14. «Зеркало» (Баку), 15 июня 2002г., «Эхо», 4 октября 2002г.; «Новое время», 5 октября 2002г.
  15. Юнусов А., Трудовая эмиграция из Азербайджана: стратегия интеграции в рынки труда и риски. В сб. Трудовая миграция в СНГ: социальные и экономические эффекты. М., 2003.
  16. «Каспий» (Баку). 5-11 февраля 2005г.
  17. Азербайджанский Гендерный Информационный Центр. 4 сентября 2006г. (Демоскоп Weekly, No 257-258, 18 сентября – 1 октября 2006).
  18. Саркисян А., Демография — мифический «ресурс» Азербайджана 19.12.2009, [http://www.demographia.ru/articles\\_N/index.html?idR=33&idArt=1602](http://www.demographia.ru/articles_N/index.html?idR=33&idArt=1602)
  - Саркисян Асатур, Численность населения Азербайджана «довели» до 9 млн. человек. 16.01.2010, [http://www.demographia.ru/articles\\_N/index.html?idR=33&idArt=1603](http://www.demographia.ru/articles_N/index.html?idR=33&idArt=1603)
  19. Новости Азербайджана, 29 марта 2010г. (Демоскоп Weekly, No 417-418, 5-18 апреля, 2010).
  20. Азербайджанские Известия, 1 февраля 2011г. (Демоскоп Weekly, No 453-454, 7-20 февраля, 2011).
  21. «Зеркало» (Баку), 15 февраля 2006г. (Демоскоп Weekly, No 235-236, 20 февраля – 5 марта, 2006г.); «Зеркало» (Баку), 12 декабря 2009г. (Демоскоп Weekly, No 403-404, 21-31 декабря, 2009); «Зеркало» (Баку), 13 ноября 2010г. (Демоскоп Weekly, No 443-444, 15-28 ноября, 2010); Trend, 11 марта 2011г. (Демоскоп Weekly, No 459-460, 21 марта – апреля, 2011).
  22. The Waning World Power: The demographic future of Russia and other Soviet successor states. Das Berlin-Institut für Bevölkerung und Entwicklung April 2011.

23. Սուզյան Ս., Ժողովրդագրական իրավիճակը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, «Նորագույն» ԳԿՀ, 21-րդ ԴԱՐ, #3, 2009:
24. Grimes, Barbara. *The Ethnologies*. 14-th edition. Dallas: SIL, 2002.
25. Fakhraddin Aboszoda, *Results of the census of Azerbaijan*  
<http://www.bakutoday.net/fakhraddin-aboszoda-results-of-the-census-of-azerbaijan-suggestive.html>
26. Марджанян А.А., «Азербайджанская статистика о численности талышей и прочих нацменьшинств», - В сб. *Введение в Историю и Культуру Талышского Народа*. Под ред. проф. Г.Асатряна, Ереванский Государственный Университет, Ереван, 2011г., с. 29-36.
27. Жиромская В.Б., Киселев И.Н., Поляков Ю.А., Польвека под грифом «Секретно». Всесоюзная перепись населения 1937 года, М., Наука, 1996.
28. Андреев Е.М., Дарский Л.Е., Харькова Т.Л., Население Советского Союза: 1922—1991, М., Наука, 1993.
29. Всесоюзная перепись населения 1926 года, М., Издание ЦСУ Союза ССР, 1928-29, том 10-16.
30. Всесоюзная перепись населения Союза ССР, 1939г. РГАЭ РФ (быв. ЦГАНХ СССР), фонд 1562, опись 336, ед. хр. 966-1001 (Разработочная таблица ф. 15А. Национальный состав населения по СССР, республикам, областям, районам).
31. Всесоюзная перепись населения Союза ССР, 1959г. РГАЭ РФ (быв. ЦГАНХ СССР), фонд 1562, опись 336, ед. хр. 1566а -1566д (Таблица 3,4 Распределение населения по национальности и родному языку).
32. Всесоюзная перепись населения Союза ССР, 1970г. РГАЭ РФ (быв. ЦГАНХ СССР), фонд 1562, опись 336, ед. хр. 3998-4185 (Таблица 7с. Распределение населения по национальности, родному и второму языку).
33. Всесоюзная перепись населения Союза ССР, 1979г. РГАЭ РФ (быв. ЦГАНХ СССР), фонд 1562, опись 336, ед. хр. 6174-6238 (Таблица 9с. Распределение населения по национальности и родному языку).

34. Всесоюзная перепись населения Союза ССР, 1989г. Рабочий архив Госкомстата России. Таблица 9с. Распределение населения по национальности и родному языку.
35. Народы мира. Энциклопедия. М., ОЛМА. 2007.
36. Мелик-Шахназаров Л., Хачатрян А., Этнополитика Азербайджана. Ереван, «Де-Факто», 2007г.
37. «Независимая газета» (Москва), 7 апреля, 2000г.
38. Марджанян А.А., Энергетическое будущее Южного Кавказа: Электроэнергетика. Центр стратегических оценок и прогнозов. Москва, 11.05.2011. [http://www.csef.ru/studies/politics/projects/russian\\_armenian\\_relations/articles/1499/](http://www.csef.ru/studies/politics/projects/russian_armenian_relations/articles/1499/)
39. «Зеркало» (Баку), 29 января 2011г. (Демоскоп Weekly, No 453-454, 7-20 февраля, 2011г.
40. Война с армянами в Карабахе – «не наша война»: Обращение общественных организаций и лидеров коренных народов Азербайджана к проживающим в республике сородичам, <http://www.regnum.ru/news/fd-abroad/1478044.html>
41. Goble P., Yerevan Again Ready to Play «Talysh Card». Azerbaijan Diplomatic Academy. Vol. IV, No. 24 (December 15, 2011).

**ՀԱՎԵԼՎԱԾ** 1

**ՄԻԳՐԱՏԱՆԵՐ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ**

1.1. Աշխարհի տարբեր երկրներում Աղբեջանից, Վրաստանից և Հայաստանից մեկնած միգրանտների\* թվաքանակը 2010թ. վերջի դրությամբ: Համաձայն ՀԲ ԶՀՀ 2011թ. տեղեկատուի:

Տվյալները դասակարգված են ըստ Աղբեջանից միգրանտների թվի (մարդ)

Դր երկրում	Դասակարգված ըստ Աղբեջանի	Որտեղից			Անդրկովկայան երեք հակառապետություններից
		Աղբեջան	Վրաստան	Հայաստան	
1	ՌԴ	866 843	644 390	493 126	2 004 359
2	Հայաստան	164 483	75 792		240 275
3	Այլ Հարավ**	145 784	98 123	76 329	320 236
4	Ռէկրաֆինա	92 536	72 410	53 193	218 138
5	Ղազախստան	38 921	2 635	7 357	48 912
6	Խորաբել	35 101	26 032	16 509	77 643
7	Գերմանիա	23 265	18 164	15 515	56 944
8	Թուրքիա	18 807	7 295	891	26 993
9	ԱՍՀ	9 689	25 310	77 208	112 206
10	Թուրքմենստան	7 895	0	7 248	15 142
11	Վրաստան	7 819		17 769	25 589
12	Լատվիա	5 212	3 845	3 164	12 221
13	Բելառուս	3 792	1 807	6 074	11 672
14	Հոնդուրաս	2 821	941	1 912	5 674
15	Կանադա	2 631	1 781	2 555	6 967
16	Իրան	2 155	0	1 375	3 530
17	Լիտվա	849	568	431	1 847
18	ՄԲ	751	738	789	2 278
19	Խոպանիա	569	10 702	12 388	23 658
20	Շվեյչարիա	541	385	888	1 814
21	Լեհաստան	358	465	1 941	2 764
22	Ֆրանսիա	350	1 156	14 481	15 987
23	Ավստրալիա	315	420	1 156	1 892
24	Խոտայիա	254	1 316	554	2 124
25	Նորվեգիա	221	141	167	529
26	Ավստրիա	196	659	589	1 444
27	Դանիա	188	158	744	1 089
28	Չեխիա	186	362	931	1 479
29	Հունաստան	156	41 817	8 769	50 742
30	Շվեյցարիա	152	373	474	998
31	Իոլանդիա	112	366	135	613
32	Բելգիա	111	416	1 153	1 680
33	Արգենտինա	99	74	46	219
34	Ֆինանդիա	69	74	148	290
35	Նոր Զելանդիա	59	89	36	184
36	Ճապոնիա	48	49	32	128

Դասակարգված ըստ Աղբեջանի	Որտեղից			Անդրկովկայան երեք հակառապետություններից			
	Աղբեջան	Վրաստան	Հայաստան				
37	Ալովակիա		39	73	164	276	
38	Կիպրոս		33	13 497	1 037	14 568	
39	Կոնգոյի Հ.		24	18	12	54	
40	Սերբիա		22	138	76	237	
41	Հունգարիա		19	78	75	173	
42	Պորտուգալիա		16	199	78	292	
43	Լյուքսեմբուրգ		5	14	7	26	
44	Կամբոջա		5	2	2	9	
45	Բուլղարիա		3	0	2	5	
46	Էկվադոր		3	0	53	56	
47	Պերու		3	0	1	4	
48	Մավրիտանիա		2	2	2	6	
49	Պանամա		1	1	6	9	
50	Ուրուգվայ		1	1	215	217	
51	Աղբեջան			5 258	42 596	47 854	
52	Բնիլի				14	0	14
53	Չիլի				3	17	21
54	Շոմբենիլյան Հ.				18	9	27
55	Վենետուելա				3	28	31
<b>Ամբողջը</b>		<b>1 433 513</b>	<b>1 058 300</b>	<b>870 458</b>	<b>3 362 271</b>		

\*Ներառում են միայն այն միգրանտներին, որոնց համար ֆիբուլա են դրամային փոխանցումներ բանկային համակարգի միջոցով

\*\*Հարավային կիսագնդի աղ երկրները, որոնք եղանակ չեն այդուսակում

1.2. Աշխարհի տարբեր երկներից Աղբեջանում, Վրաստանում և Հայաստանում գտնվող միզրանտների թվաքանակը\* 2010թ. վերջի դրությամբ: Համաձայն ՀԲ ԶՀՀ 2011թ. տեղեկատուի

Տվյալները դասակարգված են ըստ Աղբեջանի ցուցանիշների (մարդ)

Դրամի հիմք	Որ երկրում		Անդրկողվասի 3 համերապե- տություններում
	Աղբեջան	Վրաստան	
1 Այլ Հարավ՝**	155 844	3 871	6 145
2 ՌԴ	50 007	109 968	32 993
3 Հայաստան	42 596	17 769	60 365
4 Ուկրաինա	10 234	7 447	4 873
5 Վրաստան	5 258		75 792
6 Աղբեջան		7 819	164 483
7 Բելառուս		310	310
8 Բուլղարիա		1 200	1 200
9 Չինաստան		600	600
10 Էստոնիա		41	41
11 Գերմանիա	1 676	1 241	2 917
12 Հունաստան	1 365	3 360	4 725
13 Հնդկաստան		434	434
14 Իրան		455	18 154
15 Խորվիտ		972	972
16 Խոհեմարդություն		331	331
17 Ղազախստան		455	1 480
18 Կորզուստան		145	145
19 Լատվիա		62	62
20 Լիխանան		2 123	2 123
21 Լիտվա		83	83
22 Մոլդովա		124	124
23 Նեպալ		393	393
24 Պակիստան		1 655	1 655
25 Ռումինիա		476	476
26 Սիրիա		6 065	6 065
27 Տաջիկստան		207	207
28 Թուրքիա		6 206	3 679
29 Թուրքմենստան		145	1 543
30 ՄԲ		538	538
31 ԱՄՆ		1 593	1 593
32 Ուգրեկանան		765	2 163
33 Այլ Հյուսիս***		163	90
ԱՄԲՈՂՋԸ	263 940	167 269	324 184
			755 393

\*Ներառում են միայն այն միզրանտներին, որոնց համար ֆիբաված են դրտմային փոխանցումներ բաժնեկան համակարգի միջոցով

\*\*Հարավային կիսագնդի այլ երկրներ, որոնք եշված չեն աղյուսակում

\*\*\*Հյուսիսային կիսագնդի այլ երկրներ, որոնք եշված չեն աղյուսակում

1.3. Աշխարհի տարբեր երկներից Աղբեջան, Վրաստան և Հայաստան դրամական փոխանցումները 2010թ. վերջի դրությամբ (\$մլն. շտկված ըստ գնողության): Համաձայն ՀԲ ԶՀՀ 2011թ. տեղեկատուի

Տվյալները դասակարգված են ըստ Աղբեջանի ցուցանիշների

Դասակարգված ըստ Աղբեջանի	Ստացող երկիր			Ընդհանուրը Անդրկողվասի համար
	Աղբեջան	Վրաստան	Հայաստան	
1 Ո՞Դ	898.7	490.6	436.5	1 825.7
2 Հայաստան	154.7	45.9		200.6
3 Այլ Հարավ՝**	137.1	58.0	53.8	248.9
4 Ուկրաինա	87.0	43.4	37.5	167.9
5 Խորվիտ	45.4	27.7	20.1	93.1
6 Ղազախստան	39.1	1.9	6.2	47.2
7 Գերմանիա	33.8	22.8	22.1	78.7
8 Թուրքիա	19.5	5.6	0.8	25.9
9 ԱՄՆ	14.6	33.5	116.0	164.2
10 Թուրքմենստան	7.4		5.3	12.8
11 Վրաստան	7.4		12.5	19.9
12 Լատվիա	5.7	3.1	3.0	11.8
13 Նիդեռլանդներ	4.3	1.3	2.9	8.5
14 Կանադա	3.8	2.2	3.6	9.6
15 Բելառուս	3.6	1.2	4.8	9.7
16 Իրան	2.0		1.1	3.1
17 ՄԲ	1.05	0.87	1.06	2.98
18 Լիտվա	0.92	0.46	0.40	1.78
19 Շվեյչարիա	0.80	0.50	1.31	2.61
20 Բաղասիս	0.77	12.15	16.05	28.97
21 Ֆրանսիա	0.51	1.48	21.03	23.03
22 Ավստրալիա	0.47	0.55	1.73	2.75
23 Նորվեգիա	0.40	0.24	0.32	0.96
24 Լեհաստան	0.39	0.38	1.83	2.59
25 Խոալիա	0.35	1.56	0.75	2.66
26 Դանիա	0.30	0.23	1.21	1.74
27 Ավստրիա	0.30	0.87	0.88	2.05
28 Շվեյցարիա	0.26	0.59	0.84	1.69
29 Շեխիա	0.22	0.34	1.00	1.56
30 Հունաստան	0.21	46.13	11.05	57.39
31 Իռլանդիա	0.18	0.51	0.21	0.89
32 Բելգիա	0.16	0.54	1.69	2.39
33 Ֆինլանդիա	0.10	0.10	0.22	0.42
34 Արգենտինա	0.10	0.05	0.04	0.20
35 Նոր Զելանդիա	0.08	0.09	0.04	0.22
36 Ճապոնիա	0.07	0.06	0.05	0.17
37 Ալբանիա	0.05	0.07	0.17	0.28

Դասակարգված ըստ Աղբեջակի	Ստացող երկիր			Ընդհանուրը Աղբեջական համար
	Աղբեջան	Վրաստան	Հայաստան	
38 Կիպրոս	0.04	14.89	1.31	16.24
39 Մեքսիկա	0.023	0.104	0.066	0.193
40 Կոնգոյի Հ.	0.023	0.011	0.008	0.042
41 Հունգարիա	0.021	0.066	0.073	0.160
42 Պորտուգալիա	0.019	0.195	0.087	0.302
43 Լյուքսեմբուրգ	0.010	0.028	0.016	0.054
44 Կամբոջա	0.004	0.001	0.002	0.007
45 Բուլղարիա	0.003		0.001	0.004
46 Էկվադոր	0.003		0.040	0.044
47 Պերու	0.003		0.001	0.003
48 Մավրիտանիա	0.002	0.001	0.001	0.004
49 Պանամա	0.001	0.001	0.005	0.008
50 Ուրուգվայ	0.001	0.001	0.194	0.195
51 Շրի Լանկա	0.001	0.000		0.001
52 Աղբեջան		3.54	33.55	37.09
53 Բելզ		0.009		0.009
54 Բրազիլիա		0.097		0.097
55 Չիլի		0.003	0.015	0.018
56 Դոմինիկյան Հ.		0.012	0.007	0.020
57 Վենետուելա		0.002	0.026	0.029
Ընդհանուրը՝ 2010թ.	1 472	824	824	2 296

Ծանուցում - Համաձայն ՀԲ ԶԲ ՁԲ մեթոդաբանության, Հայաստանից Արցախի և Արցախից Հայաստան փօխանցումները դիտարկվում են որպես Հայաստանից Աղբեջան և Աղբեջանից Հայաստան:

“Հարավային կիսագլուխ այլ երկրներ, որոնք նշված չեն աղյուսակում”

1.4. Աղբեջանից, Վրաստանից և Հայաստանից տարբեր երկրներ կատարված դրամական փոխանցումները 2010թ. վերջի դրույթամբ (\$մլն, շուկան ըստ գնողունակության): Համաձայն ՀԲ ԶԲ ՁԲ 2011թ. տեղեկատուի

Տվյալները դասակարգված են ըստ Աղբեջակի ցուցանիշների

Դասակարգված ըստ Աղբեջակի	Ուժարկող երկիր			2010թ. ողջ ստացվածքը	Աղբեջականից ստացված 2010թ.
	Աղբեջան	Վրաստան	Հայաստան		
1 Հայաստան	33.547	12.518		824	46.065
2 ՈՒ	24.268	53.367	16.011	5590	93.646
3 Ռուսաստան	6.769	4.362	2.897	5289	14.027
4 Վրաստան	3.541		45.878	824	49.419
5 Աղբեջան		7.353	154.681	1472	162.034
6 Չինաստան		2.333		51000	2.333
7 Գերմանիա		5.434	4.026	11559	9.460
8 Հունաստան		2.304	5.671	2107	7.975
9 Ճինաստան		0.959		55000	0.959
10 Իրան		0.263	10.472	1141	10.735
11 Խորայել		1.295		1379	1.295
12 Խոտլիա		0.316		3393	0.316
13 Լիբանան			21.218	8177	21.218
14 Լիտվա		0.211		1210	0.211
15 Նեպալ		0.881		3513	0.881
16 Պակիստան		1.716		9407	1.716
17 Ռումինիա		0.612		4517	0.612
18 Սիրիա			6.279	1407	6.279
19 Թուրքիա		1.094	0.648	950	1.742
Ընդհանուրը՝ 2010թ.	68	95	268	168759	430.923

Ծանուցում - Համաձայն ՀԲ ԶԲ ՁԲ մեթոդաբանության Հայաստանից Արցախի և Արցախից Հայաստան փօխանցումները դիտարկվում են որպես Հայաստանից Աղբեջան և Աղբեջանից Հայաստան:

## ՀԱՎԵԼՎԱԾ 2

Ազգային համապետության բնակչության կազմը (մին մարդ՝  
ըստ սեռի, ԱՎՊԿ տվյալներ\*  
[http://www.azstat.org/statinfo/demoqgraphic/en/AP\\_1.shtml](http://www.azstat.org/statinfo/demoqgraphic/en/AP_1.shtml)

Տարիներ	Ամբողջ	Որից		Որից % ամրացի նկատմամբ		իզական 1000 արականի դիմաց
		Արական	Բույսներ	Արական	Բույսներ	
1926	2,3137	1,2124	1,1013	52,4	47,6	908,4
1939	3,2052	1,6426	1,5626	51,2	48,8	951,3
1959	3,6977	1,7566	1,9411	47,5	52,5	1105,0
1960	3,8157	1,8170	1,9987	47,6	52,4	1100,0
1961	3,9733	1,9015	2,0718	47,9	52,1	1089,6
1962	4,1182	1,9748	2,1434	48,0	52,0	1085,4
1963	4,2181	2,0290	2,1891	48,1	51,9	1078,9
1964	4,3690	2,1081	2,2609	48,3	51,7	1072,5
1965	4,5095	2,1758	2,3337	48,2	51,8	1072,6
1966	4,6398	2,2433	2,3965	48,3	51,7	1068,3
1967	4,7765	2,3142	2,4623	48,4	51,6	1064,0
1968	4,8875	2,3680	2,5195	48,5	51,5	1064,0
1969	5,0095	2,4296	2,5799	48,5	51,5	1061,9
1970	5,1171	2,4830	2,6341	48,5	51,5	1060,9
1971	5,2270	2,5391	2,6879	48,6	51,4	1058,6
1972	5,3389	2,5991	2,7398	48,7	51,3	1054,1
1973	5,4440	2,6543	2,7897	48,8	51,2	1051,0
1974	5,5438	2,7061	2,8377	48,8	51,2	1048,6
1975	5,6444	2,7571	2,8873	48,8	51,2	1047,2
1976	5,7337	2,8020	2,9317	48,9	51,1	1046,3
1977	5,8283	2,8458	2,9825	48,8	51,2	1048,0
1978	5,9240	2,8871	3,0369	48,7	51,3	1051,9
1979	6,0283	2,9388	3,0895	48,8	51,2	1051,3
1980	6,1143	2,9815	3,1328	48,8	51,2	1050,7
1981	6,2067	3,0263	3,1804	48,8	51,2	1050,9
1982	6,3088	3,0769	3,2319	48,8	51,2	1050,4
1983	6,4063	3,1247	3,2816	48,8	51,2	1050,2
1984	6,5133	3,1769	3,3364	48,8	51,2	1050,2
1985	6,6224	3,2290	3,3934	48,8	51,2	1050,9
1986	6,7179	3,2743	3,4436	48,7	51,3	1051,7
1987	6,8227	3,3254	3,4973	48,7	51,3	1051,7
1988	6,9280	3,3784	3,5496	48,8	51,2	1050,7
1989	7,0212	3,4238	3,5974	48,8	51,2	1048,4
1990	7,1319	3,4817	3,6502	48,8	51,2	1048,4
1991	7,2185	3,5241	3,6944	48,8	51,2	1048,3

Տարիներ	Ամբողջ	Որից		Որից % ամրացի նկատմամբ		իզական 1000 արականի դիմաց
		Արական	Բույսներ	Արական	Բույսներ	
1992	7,3241	3,5792	3,7449	48,9	51,1	1046,3
1993	7,4400	3,6412	3,7988	48,9	51,1	1043,3
1994	7,5496	3,7025	3,8471	49,0	51,0	1039,1
1995	7,6435	3,7546	3,8889	49,1	50,9	1035,8
1996	7,7262	3,8027	3,9235	49,2	50,8	1031,8
1997	7,7998	3,8453	3,9545	49,3	50,7	1028,4
1998	7,8767	3,8832	3,9935	49,3	50,7	1028,4
1999	7,9534	3,8831	4,0703	48,8	51,2	1048,2
2000	8,0328	3,9270	4,1058	48,9	51,1	1045,5
2001	8,1143	3,9720	4,1423	49,0	51,0	1042,9
2002	8,1914	4,0150	4,1764	49,0	51,0	1040,2
2003	8,2692	4,0580	4,2112	49,1	50,9	1037,8
2004	8,3491	4,1022	4,2469	49,1	50,9	1035,3
2005	8,4474	4,1562	4,2912	49,2	50,8	1032,5
2006	8,5531	4,2135	4,3396	49,3	50,7	1029,9
2007	8,6661	4,2749	4,3912	49,3	50,7	1027,2
2008	8,7799	4,3368	4,4431	49,4	50,6	1024,5
2009	8,9224	4,4144	4,5080	49,5	50,5	1021,2
2010	8,9976	4,4555	4,5421	49,5	50,5	1019,4
2011	9,1111	4,5171	4,5940	49,6	50,4	1017,0

\*ԱՎՊԿ ծանուցում 1926, 1939, 1959, 1970, 1979, 1989, 1999, 2009թթ.՝ ըստ մարդահամարների արդյունքների: Ներքենումն իրականացված է 2011թ. սեպտեմբերին:

## Արա Մարգանյան

ԱՐԲԵՔԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
«ՎԻՐԵՇՈՒԱՐ» ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԱՎԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գիտական խմբագիր՝  
Գագիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տեխնիկական խմբագիրներ՝  
Խոնարհիկ ՔԱՐԱՐՈՒՂԼԱՆՑԱՆ  
Լուսինե ԲԱՐԴԱՄՅԱՆ

Էջաղող-Ճեալորող՝  
Արմեն ԲԱՐԻՇՅԱՆ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ  
ՀՀ, 0026 Երևան, Գարեգին Նժեկի 23/1  
Կայք [www.noravank.am](http://www.noravank.am)  
Էլ.-փոստ [office@noravank.am](mailto:office@noravank.am)  
Հեռախոս/ֆաքս + (374 10) 44 04 73

